Զ. ՏԱՐԻ 1784 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 14 ԲԱՂԻՑ 4382 – Հ. Տ. 22 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1889 – Ն. Տ. 3 ՅՈՒՆՈՒԱՐ 1890 – ՀԻՃՐ. 14 ՃԷՄԱԶԻՒԼ ԷՎՎԷԼ 1307 ՈՒՐԲԱԹ

20 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
[illegible] ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Նորատունկեան-խան

درعلیه‌ده غلطه‌ده نورادونکیان خانده آره‌ولك
غزته‌سی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար	Տարեկան	գահեկան	արծաթ	160
»	»	Վեցամսեայ	» »	80
»	»	Եռամսեայ	» »	40
Գաւառաց	»	Տարեկան	» »	200
»	»	Վեցամսեայ	» »	100
Օտար երկիրներէ		տարեկան	ֆրանք	56
»	»	վեցամսեայ	»	28

Դուրս ղրկուած լրագրաց հասցէի ծախքը Տնօրէնութեան վրայ է
Խմբագրութեան ղրկուած նամակ կամ գրութիւն ետ չդարձուիր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, 22 ԴԵԿՏԵՄԲԵՐ, 1889

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՈՒՏԵԼԻՔ ԵՒ ԽՄԵԼԻՔ

Ամանորի տօներուն առթիւ ուտելիքի և խմելիքի խօսք ընել արդէն անդէպ չէ. բայց ասոր համար մասնաւոր գրգիռ մ'ալ ունինք, որ է Տփղիսի Ցուցահանդէսը։ Լրագրոյս մէջ ընդարձակ տեղեկութիւններ հրատարակեցան Տփղիսի ցուցահանդէսին վրայ, և ընթերցողք գոհութեամբ տեսան թէ մեր Կաւկասիոյ ազգայինք ամենէն կարեւոր տեղը բռնած են ցուցադիր ազգաց մէջ, նոյն իսկ Ռուսներէն, Վրացիներէն և կաւկասիոյ գերման գաղթականներէն գերիվեր հանդիսանալով։ Այս ցուցահանդէս որոշապէս ի հանդէս բերաւ հայ տարրին գերակշիռ դիրքն ի Կաւկասիա ո՛չ միայն իբրեւ վաճառական այլ եւ իբրեւ արդիւնաբեր կամ արտադրիչ ժողովուրդ։ Ամեն ճիւղերու մէջ, ամեն արհեստից մէջ, ամեն արտադրութեանց մէջ գլխաւոր մրցանակներն և մրցանակաց մէկ մեծ մասն Հայք շահեցան։ Թէեւ Թիֆլիզի շրջուն թղթակիցն, որոյ ի Պարսկաստան ուղեւորութեան վրայ մի քանի անգամ խօսեցանք, այս ցուցահանդէսն ակնարկելով իւր նամակաց միոյն մէջ, Անգլիոյ գաւառային քաղաքի մը երկրագործական ցուցահանդէսէն տարբեր բան մը չէր նկատած, բայց Կաւկասիոյ համար մեծ կարեւորութիւն ունենալն ակներեւ է, քանի որ առաջին անգամ լինելով կանոնաւոր ձեւի մը տակ կը ցուցնէ Կաւկասիոյ արհեստական վիճակն, որ անշուշտ մեծ գրգիռ մը պիտի առնու այս հրապարակային քննութենէ, և նոր ջանքեր, նոր յառաջդիմութիւններ ընելու պիտի մղուի։

Խնդակցելով մեր Կաւկասցի ազգայնոց՝ Ցուցահանդէսին մէջ իրենց յառաջադէմ կացութեան համար, կ'ուզենք որ այդ արհեստական ցոյցէ մեր Թուրքիաբնակ ազգայինք ևս բան մը սորվին։ Ի ցոյց դրուած արհեստային նիւթոց նկարագրութիւններէն և բաշխուած մրցանակաց մանրամասնութիւններէն իմացան հետաքրքիր ընթերցողք թէ Կաւկասիոյ Հայք մասնաւորապէս փայլած են Գիւղային Տնտեսութեան և Գինեգործութեան մէջ։ Եւ անկարելի է ցաւ ի սիրտ չհաստատել թէ Թուրքիացի արհեստագործ Հայն, որոյ շատ մը ձեռակերտք Թուրքիոյ մէջ և ուրիշ երկրաց մէջ ալ սքանչացմամբ դիտուած են, ընդհակառակն հոգ չի տանիր այս երկու կարեւոր ճիւղերու, որք սակայն մեծ տեղ կը գրաւեն ազգի մը արհեստական և արդիւնաբերական տնտեսութեան մէջ, և հարստութեան կարեւոր միջոցներ կը կազմեն։

Մայրաքաղաքիս և Թուրքիոյ ուրիշ վաճառաշահ կեդրոններու մէջ սպառուած զանազան իւղերու, կարագներու, պանիրներու և գինիներու մէջ հայ արտադրիչք գրեթէ բնաւ բաժին չունին։ Զատանք Կ. Պոլսեցին կը գնէ կա՛մ օտար երկիրներէն, կամ Բուլկարներէն և ծովեզերեայ վայրաց և կղզեաց Յոյներէն։ Բնիկ ժողովրդոց մէջ ի վաղուց անտի Յոյնք, Պուլկարք և Ալպանիացիք տեսակ մը մենավաճառ ըրած են գիւղային տնտեսութեան վերաբերեալ ապրանքներն, որոց թէ՛ արտադրիչք և թէ վաճառականք իրենք են։ Եւ սակայն Թուրքիոյ Հայոց մէկ մեծ մասը գիւղացի է, երկրագործ է, իւր ապրուստն իւր հողէն և իւր դաշտէն կ'առնու, և զարմանալի է որ Թուրքիոյ Հայք ո՛չ միայն իրենց առանձին սպառման այլ և արտածութեան եւ վաճառականութեան համար կարագներ, իւղեր, պանիրներ և գինիներ չարտադրեն յաջողապէս։ Հայաբնակ գաւառաց մէջ պտըտողներ կը յիշեն թէ հայ գիւղացւոց տուներու մէջ պատահած են ընտիր իւղերու, ճաշակած են խորժահամ պանիրներ, և խըմած են անարատ գինիներ, բայց առեւտրական կեդրոններու մէջ չեք գտներ անոնցմէ։ Հայք այս մասին իրենց Թուրք հայրենակիցներէն ալ ետ մնացած են. [illegible] ո՛րչափ ևս նախնական վիճակի մէջ, բայց դարձեալ Թուրք գիւղացիներ կենդանական և բուսական իւղեր պատրաստել և ծովեզերեայ քաղաքներ և Կ. Պոլիս զրկել գիտեն, ուր զտուելով ընտիր իւղեր կը դառնան։ Հայք այս ճիւղին հոգ չեն տարած, բայց Կաւկասիոյ Հայոց քաջալերական օրինակը ցոյց կուտայ թէ Հայք կարող են փայլիլ և շահիլ այս ճիւղի մէջ ևս, եթէ քիչ մը ջանք և դրամ չխնայեն, և մանաւանդ եթէ սորվին։

Այո՛, գիւղատնտեսութիւնն ալ արհեստ մ'է, զոր սորվեցնելու յատուկ վարժարանք կան Եւրոպիոյ մէջ։ Ռուսերն ևս որք բուն մեծի մասին երկրագործ են, կանուխէն հասկցած են այս արհեստին առաւել կարեւորութիւնն իրենց ազգային տնտեսութեան մէջ, և գիւղատնտեսութեան բարձրագոյն վարժարաններ ունին, ուստից քաջ մասնագէտ վարպետներ կը հանեն, ինչպէս կան մասնագէտ երկրագործներ, հանքաբաններ, անտառագործներ, ևն։ Անասունները պահել, բազմացնել և պարարտացնել, կարելի եղածին չափ առատ և լաւ կաթ առնուլ, կարագ և պանիր շինել, կենդանին մորթելէն ետքն ալ նորա մսէն, ճարպէն և ոսկրներէն իւղեր հանել (որք են մեր Սէտէֆ եաղ և [illegible]ները), դասնք ուսմամբ և վարժութեամբ մեր գիւղացիք և մեր քաղաքացիք ալ կրնան և պարտին սորվիլ, այնպիսի ժամանակ մը մանաւանդ երբ ուրիշ արհեստներու մէջ եւրոպեան մրցումէ կը գանգատինք, որ այս տեղային բերքերու մասին անզօր կը մնայ, ինչպէս արդէն կ'երեւի։ Եւրոպայէն բերել տրուած իւղեր և պանիրներ սուղ բաներ են, և օր մը աւելի սուղ պիտի գտնենք զանոնք, երբ մաքսերու որոշեալ բարձրացումն ի գործ դրուի։ Ռուսիայէն բերել տրուած իւղերուն անճանաչելի և վնասակար խառնուրդն ընդհանուր դժգոհութիւն կը պատճառէ, և Մայրաքաղաքիս հրապարակին վրայ տեսնուած Փոքր-Ասիոյ իւղերն անմիջապէս կ'ըսպառին, եթէ քիչ շատ խնամով պատրաստուած գտնուին։ Պանրագործութիւնը կ'ապրեցնէ շատ մը Յոյներ, Պուլկարներ և Փոքր-Ասիոյ Թուրք ժողովրդեան մէկ մասը։ Մեծապէս փափաքելի և շահաւէտ բան մը կը լինէր եթէ գաւառացի ձեռներեց Հայեր գտնուէին որք գեղատնտեսութիւն սորվեցնել տային իրենց գաւառաց, և արհեստի այս ճիւղին համար չխնայէին քիչ մը զոհողութիւն, որ տարակոյս չունինք թէ մօտաւոր ապագայի մը մէջ կրնայ պսակել մեր ակնկալութիւններն, ինչպէս պսակած է Կաւկասիոյ Հայոց ակնկալութիւնը։

Նոյն դիտողութիւնները կրնանք ընել գինեգործութեան մասին։ Հայաբնակ գաւառաց մէջ խաղողի անարատ ջուրէն գինիներ կը շինեն, որք սակայն տարիէ մը աւելի չեն դիմանար, որովհետեւ արհեստիւ շինուած չեն։ Հա՛րկ է կրկնել թէ գինեգործութիւնը մեծ արհեստ մ'է, որ միլիոնաւոր Եւրոպացիներ կ'ապրեցնէ։ Մեր երկրին այգիներն Եւրոպացւոց սքանչացման առարկայ են, որք մեր գինիները գընելով, արհեստական կերպիւ կը պատրաստեն, և Ֆրանսայի և Հունգարիոյ ամենէն սուղ գինիներուն համահաւասար հանդիսացնելով, քանի մը պատիկ սուղ կը վաճառեն։ Այս նիւթիս վրայ անցեալներն ալ գըրեցինք, Էրէնքէօյի այգիներուն և անոնց խաղողէն պատրաստուած գինիներուն վրայ Մայրաքաղաքիս անգլ. հիւպատոսին տեղեկագրէն հատուած մը ներկայացնելով մեր ընթերցողաց։ Անթեպէ և Ամասիայէ կը գրեն մեզ թէ հոն շատ խաղող կ'արտադրի, բայց տեղացիք գինեգործութեան արհեստը չունենալով, բնաւ օգուտ չեն քաղեր։ Անթապ մանաւանդ որ Միջերկրականի և հետեւապէս բովանդակ Եւրոպիոյ հետ հաղորդակցութեան դիւրութիւն ունի, գինիներ արտածելու քաջայարմար վայր մ'է, եթէ տեղացիք սորվին և մշակեն գինեգործութեան արհեստը։ Պարթալի, Ադրիանուպոլսոյ և Դարդանելի այգիները մշակելով և ընտիր գինիներ արտադրելով քանի մը ճարտարագործ Հայերու ցուցած յաջողութիւնն ապահովութիւն մ'է թէ արհեստական ճարտարութիւն և նիւթական շահ անմատչելի չեն մերազնեից, եթէ ուշադրութիւն դարձնեն նաեւ գինեգործութեան ճիւղին։

Անցեալ օր առեւտրական ասպարէզին մեր ազգայնոց առջեւ հետզհետէ սեղմուելուն վրայ կը խօսէինք։ Այս երեւոյթին հետեւանք է մեր կամքէն անկախ պատճառներու։ Բայց կան շահու աղբիւրներ զորս մշակել մեր ձեռքն է։ Ինչո՞ւ համար չունենանք մեր մանչ զաւակաց համար Արհեստանոց մը, ուր տեսականապէս և գործնականապէս սորվի նոր սերունդն այնպիսի արհեստներ որք տակաւին հաց կրնան տալ մեզ։ Բերայի մէջ Եւրոպացի դերձակուհիք կը վխտան, Եւրոպայէն կնօջական հագուստք պատրաստ կուգան, բայց այս չարգիլեր մեր Բերայի իգական Արուեստանոցին յառաջդիմելէ և արդիւնաւոր հանդիսանալէ։ Եւրոպեան արհեստք և արհեստագործք նմանապէս չեն արգելեր մեր երկրին մէջ մշակելու արհեստներ որոց նախնական նիւթերն այնքան առատ և ընտիր կերպիւ կ'ընծայէ մեր գեղեցիկ երկիր։ Մեզ հայրենակից ժողովրդոց ոմանց և մեր Կաւկասցի ազգայնոց օրինակն առ այս հզօրապէս պէտք է քաջալերէ զմեզ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՕՐՈՒԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ

Թուրին, 1 յունուար. —Արհեստական «Տորա» անուն ակումբն հացկերոյթ մը տուաւ ի պատիւ ծովային նախարարին, որ ճառ մը արտասանելով, ցաւ յայտնեց որ Եւրոպիոյ ընդհանուր պայմանք ծանրապէս կը կըշռեն Իտալիոյ վրայ, որ ամեն ազգաց հետ խաղաղապէս ապրիլ կը փափաքի, և իւր անկախութիւնը ձեռք բերելու համար ամեն ջանք ընելէն ետքը, պէտք կը զգայ բոլորով սրտիւ աշխատելու իւր տնտեսական և ընկերական վերածնութեան։ «Մաղթենք որ իրաց այս վիճակ բարւոքի, և Ամանորի առթիւ մեծագոյն բաղձանքս այն է որ այժմեան հանդարտութիւնը տեւական լինի, այնպէս որ մօտ ժամանակէն տեսնենք այն օրն ուր հնար լինի երկրին վրայ ծանրացող բեռները թեթեւցնել։ Իտալեան կառավարութիւնը գիտէ թէ իւր պարտականութիւն է ամեն բան ընել այդ օրը փութացնելու համար, և հաստատապէս մտադիր է կատարել այս նըւիրական պարտականութիւն։

—Միւնխէն, 1 յունուար. —Ինֆլուենցայի պատճառաւ, Ամանորի առթիւ սովորական ընդունելութիւն չեղաւ Պաւիերայի արքունեաց մէջ։

—Վիեննա, 1. —Ինֆլուենցան արագապէս կը ծաւալի, և ողջապահիկ բարձրագոյն խորհուրդն որոշեց նոր հիւանդանոցներ բանալ, և յունուար 7էն առաջ չվերաբանալ դպրոցները։

—Պարիզ, 1. —Տեղւոյս պահապան զօրաց մէջ 1,557 անձինք Ինֆլուենցայէ բռնուած են։ 44 անձինք ծանրապէս բռնուած լինելով, կը դարմանուին զինուորական հիւանդանոցին մէջ։

—Հռոմ, 1. —Պապն Ամանորի առթիւ բանախօսելով, ցաւ յայտնեց որ Իտալիոյ մէջ կաթոլիկ Եկեղեցւոյ հակառակորդք, և ընդ նոսին կառավարութիւնն, անընդհատ կը շարունակեն հարուածել Պապութիւնն և Եկեղեցին։ Բաւ է յիշեցնել Ճորտանօ Պրունոյի յիշատակին փառաւորումը։ Պապն այս առթիւ ևս պահանջեց քաղաքական իշխանութիւն Պապութեան համար. ըսաւ թէ Իտալիոյ Պատժական նոր Օրէնքը կղերին իրաւանց և ազատութեանց դէմ ուղղեալ հարուած մ'է, և թէ բարեպաշտական հաստատութեանց վրայ դրուած նոր օրէնքը քայլ մ'ևս է բոլորովին խափանելու համար բարեգործութիւնն յԻտալիա։

—Աղի մենավաճառին համար սերպ կառավարութեան կողմէ Վիեննայի անգլեւաւստրեան ընկերութեան տըրուած դրամական փոխարինութիւնն է 5,740.000 ֆրանք։

—Ի Պելկրատ շատ ուշադրութիւն կը գրաւէ Աքուփչինայի քուէն որով ինքնաբերաբար տուաւ 300,000 ֆր. իբրեւ գաղտնի վարկ Սերպիոյ արտաքին գործոց նախարարութեան։ Կ'երեւի թէ Աքուփչինայի ծայրայեղ տարրերէ բաղկացեալ մեծամասնութեան նպատակն է քաջալերել սերպիական փրոփականտան ի Մակեդոնիա։ Նախարարութիւնն հարկ համարեց ապահովութիւն տալ Աւստրիոյ դեսպանին թէ այս գումար Պոսնիոյ մէջ խըռովութիւններ գրգռելու չպիտի գործածուի, որպէս ըսած էին չար լեզուներ։

Գ. ԿԼԱՏՍԹՈՆ 80 ԱՄՆԱՑ

Այս երկուշաբթի աւուր անգլիական լրագիրք կը խօսին Գ. Կլատսթոնի ութսներորդ տարեդարձին վըրայ, զոր Ազատականք մեծաւ ցնծութեամբ տօնեցին։ Զարմանալի կորով մ'ունի այս մարդ, որ դեռ քաջառողջ է. ամբողջովին պահած է իւր մտաց պայծառութիւն, հաստատապէս կը քալէ, մարմնային մարզանքներն ըստ առաջնոյն կը շարունակէ, իւր ատենաբանութիւն նախկին ոյժն ունի, և ծերութեան միակ նշանն այն է որ ականջը ծանրացած է քիչ մը։ Անգլիական քաղաքականութեան այս Նեստորը, զոր իւր հայրենակիցք արդէն իսկ կը դասեն, և իրաւամբ կը դասեն, ի շարս Փիթի, Ռոպերթ Փիլի, Փալմերսթընի և Պիքընսֆիլտի, իւր ետեւ ունի այսօր 57 ամաց քաղաքական ասպարէզ մը։ 1832 ին Երեսփ. Ժողովոյ անդամակցեցաւ իբրեւ Նիւարքի երեսփոխան։ Գ. Կլատսթոն յայնժամ պահպանողական էր, —և արմատական պահպանողական կամ «կարմիր Թորի» մը, —ինչպէս այժմ ազատական մ'է և արմատական ազատական։ Բայց կարծեաց այս փոփոխումը Գ. Կլատսթոն անպատուութիւն չի համարիր իրեն, քանի որ իւր գաղափարաց տակաւ յառաջդիմութեան վերագրելի է, և ո՛չ թէ անձնական դժուաճ շարժառիթներու։ Վիքթորիա Թագուհին դեռ գահ չնստած, Գ. Կլատսթոն հանրային պաշտօնի մէջ էր, իբրեւ անդամ Սըր Ռոպըրթ Փիլի Նախարարութեան Ուէլլինկթընի դքսին հետ։ Երեսուն վեց տարի յառաջ, Գ. Կլատսթոն ելմտական Նախարարն էր Անգլիոյ, և ի՛նչ նախարար։ Իւր Ելմտացոյցի ճառերուն համար ըսուեցաւ թէ պերճախօսութեան նոր ճիւղ մ'են, թուանշաններու պայծառ բացատրութեան պերճախօսութիւն մը, Մուսայից նոր տեսակ մը։ 1853ին իւր առաջին Ելմտացոյցը մատոյց Երեսփոխանաց ժողովոյն։ Ո՛րպիսի պայծառութեամբ կը բացատրէր և կը պաշտպանէր մեն մի գլուխ։ Ժողովականք, առանց կուսակցական խտրութեան, ապշած, հըմայած մտիկ կ'ընէին իրեն։ Կլատսթոն այս Ելմտացոյցով կը ջնջէր աճառի վրայ տուրքն և ուրիշ 133 տուրքեր որք անհաճոյ էին ժողովրդեան։ Կը զեղչէր թէյի տուրքն, և այլ ամեն նախնական պիտոյից վրայ տուրքերը, նաեւ դատական թղթոց վրայ դրօշմի տուրքն։ 1869ի Ելմտացոյցով, որ տընտեսական ուրիշ կարեւոր գործ մ'էր, ջնջեց Թուղթի վրայ տուրքն, որով մեծ զարկ տուաւ լրագրութեան և տպագրութեան ընդհանրապէս, և զեղչեց եկամտի վրայ տուրքն ալ, որ անգլիական Ելմտացոյցի գլխաւոր տարերց մին է այժմ։

1868ին ի նախարարապետութիւն կոչուեցաւ առաջին անգամ, և այն թըւականէն ի վեր երկու անգամ ևս նախարարապետ եղաւ։ 1868ին Գ. Կլատսթոնի քաղաքական հիմնագիրն էր անկլիքան Եկեղեցւոյ Պետութենէն բաժանումն Իռլանտայի մէջ, իռլանտական հողային օրինաց բարենորոգումն, և ընտրական իրաւանց ընդարձակումն։ Այս գաղափարք իրականացած էին 1874ին։

1886ին երբ երրորդ անգամ թողուց նախարարութիւնն և Լորտ Սալիսպըրի ի նախարարապետութիւն կոչուեցաւ, Գ. Կլատսթոն արդէն 77 տարեկան էր։ Գ. Կլատսթոնի ատենաբանական զօրութիւնն անհուն է։ Անգլիական լրագիր մը կը պատմէ սա դէպք. —1879ին, արեւելեան գործոց միջոցին, Գ. Կլատսթոն [illegible] մը մէջ խօսելով կը քննադատէր Լորտ Տէրպիի մէկ շրջաբերականն։ Իւր մատերուն մէջ բռնած էր շրջաբերականին թուղթը։ Քանի որ կը ջախջախէր, կը փըճացնէր ազնիւ Լորտին փաստերը, Գ. Կլատսթոն կտոր կտոր կը պատռէր թուղթն։ Երբ ատենաբանութիւնն աւարտեցաւ, շրջաբերականին թուղթն ալ պարունակած փաստերուն վիճակակից եղած էր։ Ունկնդիրք չկրցան իրենց ծիծաղը բռնել։ Մեծանուն տրիբունն իւր փաստաբանութեան ոյժը նիւթապէս ևս զգալի ըրած էր։

Գ. Տ'Իզրայէլի (Լորտ Պիքընսֆիլտ) և Գ. Կլատսթոնի բազմամեայ պայքարն անմոռանալի պիտի մնայ խորհրդարանական տարեգրութեանց մէջ։ Գ. Տ'Իզրայէլի իւր հակառակորդն սպաննել կ'ուզէր դնդասեղի հարուածներով, քանի որ շատ վարպետ էր հեգնելու, իսկ Գ. Կլատսթոն, կորովի փայտահատ, լախտի հարուածներ կ'իջեցնէր։ Եւ սակայն, հանրային խնդրոց վրայ իրարմէ տարբերող այս հանրային մարդիկ առանձինն

—)(40)(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԺԻՒԼ ՄԱՌԻ

ԿՈՐՈՒՍԵԱԼ ԴՐԱԽՏ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԺԵՌԹՈՒԻՏ

Սէրը բնական կերպով եկած էր, առանց ցնցման, բայց անխուսափելի կերպով, եւ կը լնուր անոնց սիրտը, անոնց կեանքը, իր ամենահզօրութեամբ իշխելով անոնց վրայ, եւ երկու երիտասարդք զիրար սիրելէ ուրիշ բան չէին խորհեր։

Այս բանիս համար շատ խօսքի պէտք չէին ունեցած։

Ինչպէ՞ս կը տեսնուէին իրարու հետ։ Ինչպէ՞ս այս սէրը—որուն ծնունդը տեսանք—մեծցած էր, հակառակ հայրերնուն իրարու դէմ ունեցած ատելութեան։

Առաջին անգամ որ Անտրէ Ժիւէթի խօսքն ըրած էր, մեծ զգուշութիւններ ձեռք առած էր։ Երկար ժամանակէ հետէ կը գուշակէր արդէն թէ Ռընօտիէռ եւ Վիլլաւոն չէին սիրեր զիրար։ Վիլլաւոնի աչքերն ատելութեամբ կը շողշողային ամեն անգամ որ իր առջեւ Ռընօտիէռի անունը կ'արտասանուէր։

Անտրէ քանիցս հարցումներ ուղղած էր կոմսին։

—Զինքը չե՞ս սիրեր։

—Ո՛չ։

—Սակայն, միթէ իմ կեանքս չփրկե՞ց նա։

—Ճշմարիտ է։

—Ուրեմն ի՞նչ պատճառ կայ զինքն ատելու։

—Այդ մարդուն խօսքը մի՛ ըներ ինձ, պատասխանած էր կոմսը խուլ ձայնով մը, զաւկին ձեռքը խորտակելու աստիճան սեղմելով։

Այս կացութեան մէջ, դիւրին է ըմբռնել թէ երիտասարդը կը վարանէր սիրտը բանալ։

Օր մը Ժիւէթի հանդիպած էր, որ ագարակէ մը կը դառնար եւ ջրանցքէն կ'անցնէր դէպ ի Թուռնըֆէօյլի սահանքը։

Դէմ առ դէմ կանգ առած էին՝ երկչոտ կերպով մը ժպտելով։ Կը սիրէին զիրար։ Այս բանս իրարու ըսած չէին բընաւ։ Եւ նոյն իսկ փոքր եղած ժամանակնին, երկար խօսակցութիւններ չէին ունեցած իրարու հետ։

—Բարեւ, Ժիւէթ, ըսաւ Անտրէ, անցեալոյն սիրուն ձեւովը, երբ թէ տարիներ սահած չըլլային այդ թուականէն ի վեր։

—Բարեւ, Անտրէ, պատասխանեց աղջիկը։

Սակայն կարմրեցաւ։

Քանի մը վայրկեան քով քովի քալեցին։

—Ժիւէթ, ըսաւ երիտասարդն համարձակօրէն, զքեզ չեմ մոռցած բնաւ. եւ գիտե՞ս ինչ բանի վրայ կը մտածէի երբ կը յիշէի մեր երկուքնուս մանկութիւնը որ միասին սահած է։

—Ի՞նչ բանի վրայ կը մտածէիր, Անտրէ։

—Թէ ի զուր պիտի փնտռէի քեզմէ աւելի անոյշ աղջիկ մը, որ լաւագոյն կերպով յարմարէր իմ կինս ըլլալու։ Կ'ուզե՞ս որ երթամ հայրդ գտնեմ, սիրելի Ժիւէթս եւ ըսեմ. «Կը սիրեմ եւ միշտ սիրած եմ ձեր աղջիկը։ Համեցէ՛ք հարցունել նմա թէ ինքն ալ զիս կը սիրէ։ Եւ եթէ կը սիրէ զիս, ինձ կնութեան տուէք զինքը։ Կ'երդնում ձեզ թէ երջանիկ պիտի ընեմ զինքը»։ Ի՞նչ պատասխան պիտի տայ հայրդ, Ժիւէթ։

Կանգ առած էր, երկչոտ կերպով, եւ աչքերը խոնարհելով։

—Ըրէ՛, Անտրէ, ինչ որ սիրտդ կը հըրամայէ քեզ ընել։

Եւ իրարու ձեռք սեղմած էին ազնուաբար, աչքերնին իրարու աչաց մէջ յառած։

Ու բաժնուած էին։

Ե

ԱՐԳԻԼԵԱԼ ՍԷՐ

Ժիւէթ, կարի յուզեալ, վասն զի առաջին անգամն ըլլալով սիրային խօսք մը կը լսէր, Սէրտօն վերադարձած էր։

Մօրը խուցը մտաւ։

Հիւանդ կինը պառկած էր անկողնոյն մէջ, գլուխը երեք բարձերու վրայ դրած։ Կը կարդար, վասն զի ձեռքերն ազատ էին։ Ոտքերը միայն անդամալոյծ էին։

Ճշմարիտ ծաղկոց մըն էր այդ խուցը։

Ամառն, ամէն առաւօտ, Ժիւէթ այնտեղ կը դնէր ծաղիկներ զորս գիշերը կը ժողվէր պարտէզէն, որպէս զի անոնց սաստիկ բուրումն հիւանդ չըներ խեղճ կինը։ Պարտիզին մէջ ծաղիկ չէր թողուր մօրը համար։ Հիւանդ կինը պէտք չունէր գըլուխը դարձունելու, զմայլելու համար իր աչաց առջեւ պարզուող կենդանի գոյներուն վրայ, տերեւազարդ ոստերու հետ խառն, զորս աղջիկը կը կարգադրէր ճաշակաւ, այդ առօրեայ խնամոց մէջ ի յայտ բերելով փութկոտութիւն մը յորում նոյնքան կարեկցութիւն կար որքան որդիական գորով։

Ռընօտիէռ խնամ չէր տաներ իր կնոջը վրայ. ամբողջ օրեր ու շաբաթներ կ'անցունէր առանց զայն տեսնելու, անոր դանդաղումներէն նեղացած, բնաւին չներելով նմա որ ամուսնութեան գրեթէ յաջորդ օրն իսկ հիւանդացած էր, եւ չյիշելով թէ այդ կին սիրած էր զինքն ու կը սիրէր տակաւին, հակառակ իր դաժան բնաւորութեանն ու անտարբերութեանը։

Ժիւէթ միայն կը խնամէր իր մայրը։ Կ'օգնէր նմա տեղէն ելլելու, կերակուրը կը տանէր, անոր քով կը կարդար կամ կ'աշխատէր, եւ կամ դաշնակ կը զարնէր։

Իր կեանքն այդ անկողնոյն քով կը սահէր։

Եւ ինչքա՜ն փափուկ ու մանրախոյզ հոգածութիւնք՝ հաճելի ընծայելու համար այդ խուցը։ Երկու պատուհանները կը բանար, երբ օդը սաստիկ տաք չէր ըներ ու արեւը այդ կողմէր չէր թափանցեր, մօրը անկողինը կամ թիկնաթոռն այնպէս մը կը քշէր որ անդամալոյծը կարենար տեսնել պարտէզը, տունկերը, ծառերը, եւ աւելի հեռուն՝ վարը, դաշտօրէք՝ ամրան փայլուն արեգական լուսովը ողողուն։

Ձմեռը, երբ ծաղիկները խնամով ջերմանոցներուն մէջ կը զետեղուէին, յաջորդ գարնան միայն դուրս հանուելու համար, սենեկին մէջ դարձեալ ակնապարար տեսարան մը կը մնար։ Ցեսոյ, այդ թուականին, կարգը կուգար դալարազեղ տընկոց։ Եւ հիւանդը, գերեզմանին մօտ, մահամերձ, մտատեւ իր քովն ունէր—տարօրինակ հակապատկեր—իրաց կեանքը որ կը վերանորոգուէր անդադար։

Հրեշտակ մըն էր այդ կինը, ամուսնացեալ այդ գազանին հետ որուն անունը կը կրէր. հրեշտակ մը համակամութեան։ Իր շրթներէն, որոցմէ ցաւոց ճիչեր կելլէին յաճախ, բնաւ երբէք գանգատ մը ելած չէր Ռընօտիէռի դէմ։

Չէր ուզեր աղջիկը հօրը դէմ գրգռել։

Ժիւէթ կը պաշտէր իր մայրը։

Իսկ հօրը նկատմամբ յարգանք կը տածէր, յարգանք մը որուն մէջ թերացած չէր բնաւ, բայց այդչափ միայն։ Գորով չէր զգար բնաւ։ Չէր կրնար սիրել այդ մարդն՝ որուն քով եւ ո՛չ իսկ կարեկցութիւն մը կը գտնէր, որուն բերնէն եւ ո՛չ իսկ մխիթարական խօսք մը լսած էր մօրն համար։ Ցամքած եւ պաղ սիրտ մը ուսկից հեռացած էր իր խանդակաթ ու վեհանձն սիրտը։

Այդ օրը, ինչպէս ըսինք, Ժիւէթ իր բարեկամին խոստովանութեան հեշտ տըպաւորութեան ներքեւ, մօրը խուցը մըտած էր ամեն բան պատմելու համար։

Նախ եւ առաջ մօրը դիմել կ'ուզէր։

Անոր իմաստութեան խորհուրդ պիտի հարցունէր, վասն զի վստահ էր գորովոյն վրայ, յետոյ պիտի երթար հայրը գտնել։

—Մայր, ըսաւ, խոստովանութիւն մը պիտի ընեմ քեզ։

Անկողնոյն եզրին յենած էր եւ հիւանդին աչաց մէջ կը նայէր, ժպտելով։ Մայրն ալ, իր կարգին, աղջիկը զննեց։ Ժիւէթի աչքերը կը փայլէին։ Այտերը կարմրած էին։ Երջանիկ կ'երեւէր։ Ուրեմն, ինչ որ մայրը պիտի լսէր, վշտի մը յայտնութիւնը չէր։

—Խօսէ՛, զաւակս։

—Վիլլաւոնները կը ճանչնա՞ս։

—Այո՛։

—Կը յիշե՞ս, ատենօք, երբ քալելու կարողութիւն ունէիր եւ դուրս կ'ելլէիր, փոքրիկ տղու մը կը հանդիպէինք, կոմսին անդրանիկ զաւակը...

—Անտրէ՞ն... կը յիշեմ։

—Այո, մայր իմ, Անտրէն կը սիրէ զիս։

—Ինչպէ՞ս։

—Անտրէն կը սիրէ զիս, սիրելի մայրս, եւ կուզէ ամուսնանալ հետս։

Մայրը կը մտածէր, այս յանկարծական լուրէն քիչ մը շուարած։

—Իսկ դուն, ըսաւ, դուն ի՞նչ կը մըտածես, զաւակս։

(Շարունակելի)

՛որչափ քաղաքավար էն իրարու ։ Երբ լորտ Պիքընսֆիլտ մեռաւ, Պ. Կլատսթօն իւր երկրորդ նախարարապետութեան փառաց կատարը կը գըտնուէր ։ Պ. Կլատսթօնի վիճակեցաւ, իբրեւ Երեսփ. ժողովոյ վարիչ, նոյն ժողովոյ մէջ արտասանել հանգուցելոյն դամբանականն ։ Եւ Պ. Կլատսթօնի դամբանականն իւր մեծագոյն հակառակորդին վրայ՝ պերճախօսութեան հրաշալիք մ՚եղաւ, եւ անոր հայերէն թարգմանութիւնն երեւցաւ այն ժամանակի օրաթերթ Մասիսին մէջ ։

ԵՐԿՈՒ ԴԱՏԵՐ

Դայթակղական լուրեր կուգան Անգլիայէն ։ Հեռագրական վարչութեան քանի մը դեռահասակ պաշտօնեայներու եւ մի քանի Լորտերու դատէն զատ, որք աղնուական թաղերէն միոյն մէջ տուն մը կը յաճախեն եղեր՝ ինչպէս անցեալները ծանուցուեցաւ, իռլանտացի երեսփոխան հարիւրապետ Օ՚Շէ, երբեմն կուսակից Պ. Փառնէլի, ամուսնալուծման դատ բացած է իւր կնոջ դէմ, զոր կ՚ամբաստանէ իռլանտացի կուսակցապետին հետ անվայել յարաբերութեանց մէջ գտնուելուն համար ։ Պ. Փառնէլ շատ զգաստ մարդու համբաւը կը վայելէ, եւ կը մնայ տեսնել թէ դատարանն հիմնաւոր պիտի գըտնէ՞ հարիւրապետին գանգատն, որ ժամանակ մը մտերիմ բարեկամ Պ. Փառնէլի, վերջերս սաստիկ պաղութիւն կը ցուցնէր անոր դէմ, ինչպէս Փառնէլեան Յանձնաժողովոյն առջեւ երեւցաւ ։

ԻՐԱՒՈՒՆՔ ԿԱՆԱՆՑ

Թէեւ արդի ժամանակիս մէջ մեծ շարժում մը կայ ի նպաստ իգական իրաւանց, թէեւ հզօրապէս կը պահանջուի որ իգական սեռն արական սեռին հաւասար կըրթութիւն ստանայ, բայց տակաւին կան յառաջացեալ երկիրք որք բարձրագոյն կրթութիւն կը զլանան կանանց ։ Այսպէս, Բրուսիոյ, Սաքսոնիոյ, Վիւրթեմպերկի, Հէս-Տարմշթատի եւ Սաքս-Վէյմարի դըքսութեանց մէջ կանայք այս օրերս վերստին հանրագիրք մատուցանելով արտօնութիւն խնդրեցին բժշկութիւն ուսնելու եւ ի գործ դնելու, բայց վերստին մերժուեցան ։ Նոյն իսկ Զուիցերիոյ մէջ, գիտական բազմաթիւ հեղինակութեանց բարեխօսութեամբ եղած ձեռնարկ մ՚եւս ի դերեւ ելաւ, եւ Պալի համալսարանն իգական սեռին դէմ փակեցաւ ։

ՀԱՄԱՃԱՐԱԿՆԵՐ

Լոնտոնի մէջ եւս ինֆլուէնցայի դէպքեր կը պատահին, բայց բժիշկները կը հաստատեն թէ ծանր տեսակէ չեն ։

Ընդհակառակն, Սպանիոյ մէջ ինֆլուէնցան սաստիկ կերպիւ կը ճարակի, եւ ծանր տեսակէն, այնպէս որ շատ մահեր կը պատճառէ ։

ԹԻՓՈՒ—ԹԻՓԻ ԴԱՏԸ

Կը յիշուի թէ Պ. Սթէնլի Էմին փաշայի օգնութեան դիմելուն առթիւ իրեն ընկեր առած էր երեւելի արաբ գերեվաճառն, որ գերիներ ձեռք անցունելու համար իւր գործած վայրագութեամբք հանրածանօթ էր, բայց իբր թէ դարձի եկած՝ այս մարդասիրական գործին իւր տեղական ծանօթութեամբք եւ մեծ ազդեցութեամբ սատարել յանձն կ՚առնուր ։

Պ. Սթէնլիի արշաւանքը կազմակերպող անգլ. մասնախումբը դատ բացաւ Թիփու-Թիփի դէմ, գանգատելով թէ դրամական կարեւոր վարձատրութեանց փոխարէն իւր յանձն առած գործը չէր կատարած, այն է պաշար եւ ռազմամթերք չէր հասուցած Պ. Սթէնլիի կարաւանին ։

Դատն անցեալ շաբաթ օր վարեցաւ Զանզիպարի անգլիական հիւպատոսական դատարանին առջեւ ։

Պ. Պ. Սթէնլի եւ Պօննի, իբրեւ վկայ ներկայանալով, հաստատեցին թէ Թիփու-Թիփ իւր խոստացած օգնութիւնները չէ հասուցած ։ Աւելի դէպն այն է որ Թիփու-Թիփի եղբօրորդին Սալիմ-Մուհամմէտ հրամայած է սպաննել ամեն բնիկներ որք պաշար հասցնեն կարաւանին, եւ Պ. Սթէնլիի ընդառաջ երթալու պատրաստուած Զանզիպարցիներն արգիլած է ։

Մասնախումբը 10,000 անգլ. ոսկւոյ փոխարինութիւն կը պահանջէ, բայց Թիփու-Թիփ իւր Զանզիպարցի գործակալին արգիլած է ո՛ եւ է փոխարինութիւն վճարել ։

ԿՈՐՈՒՍՏ ՄԸ

Կը ծանուցանեմ արգոյ հասարակութեան թէ երէկ իրիկուն, ժամը կէսին միջոցները, Սամի Աղիի Կերիզ խանէն մինչեւ Սիրքէճիի կայարանը գտնուող ճանբուն վրայ կորսնցուցած եմ թղթապանակ մը որ կը պարունակէր 5600 դրշ. ի պարտամուրհակ մը, իմ անուանս [illegible] եղած, նոյնպէս ուրիշ երեք պարտամուրհակներ, քանի մը հեռագրեր, նամակներ, եւ այլն ։

Ներկայիս կը խնդրեմ որ կորուսեալ թղթապանակը գտնող անձը բարեհաճի բերել զայն ի Պոլիս, Կերիզ խան կամ Վիթալիս խան, ուր կը գտնուիմ ։ Արժանաւոր պարգեւ մը պիտի տրուի բերողին ։

ԳՐԻԳՈՐ ՓԵՕԼԷԵԱՆ

21 դեկտ. 1889 2—3

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կրօնական ժողովն երէկ ի նիստ գումարեցաւ ի խորհրդարանի Ղալաթիոյ ատենապետութեամբ Գեր. Խորէն արքեպիսկոպոս Նար-Պէյի եւ զբաղեցաւ այլ եւ այլ անհատական ու ամուսնական խնդիրներով ։

Ժողովն ի միջի այլոց հետեւեալ տնօրինութիւններն ըրաւ. մերժեց Սկիւտար Ս. Կարապետ եկեղեցւոյ աւագերէց Տ. Խորէն աւագ քահանայի հրաժարականն յաւագերիցութենէ ։ Էյուպի քարոզիչ կարգեց Արժ. Ղեւոնդ վրդ. Փիրղալէմեանը ։ Որոշեց Աղթամար ղրկել Շամախեցի Եփրեմ վարդապետն, եւ վարդապետական վեղար տալ Բեմախու Տ. Վարդան քահանային, որ այրիացեալ է ։

Ժողովն որոշեց իւր նիստերը դադրեցնել Ծննդեան տօնական աւուրց պատճառաւ ։

Ամէն. Ս. Պատրիարք Հայրն, որոշմամբ Քաղաքական Ժողովոյ, հետեւեալ շրջաբերականն ուղղեց մայրաքաղաքիս Թաղական Խորհրդոց.

Ամսոյս 14 թուականաւ եւ 123 համարաւ շրջաբերական գրութեամբ մը յանձնարարած էինք ուրեք ուրեք երեւան եկած կարմրախտի եւ փողացաւի հիւանդութեանց առթիւ զգուշական միջոցներն շարունակել խնամօք վարժարանաց մէջ, եւ եթէ թաղիդ մէջ դէպքեր պատահին, անմիջապէս փակելով վարժարանն՝ արձակուրդ տալ ուսանողաց ։

Այս մասին հետզհետէ տեղի ունեցած բժշկական զննութիւնք եւ տեղեկութիւնք մայրաքաղաքիս եւ շրջակայից բոլոր վարժարաններն փակելու անհրաժեշտ հարկն երեւան բերած լինելով, կը յանձնարարեմք ազդուապէս, ինչպէս միւս թաղական խորհրդոց՝ նոյնպէս եւ ձեզ որ եթէ փակուած չէ տակաւին թաղիդ ազգային վարժարանն, փակել անմիջապէս եւ ուսանողներն արձակել մինչեւ որ հիւանդութիւնն անհետի բոլորովին ։

Հարկ կը համարիմք յաւելուլ նաեւ որ՝ եթէ թաղիդ մէջ մասնաւոր վարժոց կամ տուներ կան ուր տղայք կը յաճախեն, զանոնք եւս պարտաւորէք սոյն վարչական տնօրինութիւնը գործադրել ։

Եւ որովհետեւ վարժարանաց փակմամբ տղայք փողոցներու մէջ չդեգերին, եւ այլ եւ այլ փորձութեանց ենթակայ չլինին, կը յուսամք որ այս մասին եւս ի գործ կը դնէք հոգածութեան պէտք եղած միջոցները ։

Մնամք աղօթարար
Պատրիարք Կ. Պոլսոյ
ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

21 դեկտ. 1889

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱԶԴ

Կրօնական Ժողովոյ

Յառաջիկայ Ս. Ծննդեան Ութօրէից տօնի կիրակին թէպէտ հարսանիք կատարել նշանակուած չէ օրացոյցներու մէջ, բայց տեսնելով որ մինչեւ բուն բարեկենդան միջոցը շատ քիչ է, Կրօնական ժողովս կը թոյլատրէ կատարել զխորհուրդ Ս. Պսակի նոյն Ութօրէից կիւրակէի երկուշաբթի օրը, ինչպէս ուրիշ անգամ նմանօրինակ պարագայից մէջ թոյլ տրուած է ի կրօնական իշխանութենէ ։

Նարլը գաբուէն կը գրեն մեզ թէ Թաղական Խորհրդոյ կողմէ տեղւոյն ազգային վարժարանին համար կազմուած Հոգաբարձութեան ջանից շնորհիւ՝ թաղին կրթական գործերը գոհացուցիչ վիճակի մը մէջ կը գտնուին եւ թէ թաղեցիք իրենց խորին շնորհակալութիւնը կը յայտնեն թէ՛ առ Թաղական Խորհուրդն եւ թէ՛ առ Հոգաբարձութիւնն ։

Փարիզից մեզ գրում են. Տեղւոյս հայ ուսանողական ընկերութիւնը մտադիր է առաջիկայ 1890 թւին հրատարակել մի ամսաթերթ, բայց թէ ի՞նչ ծրագրով եւ ի՞նչ գիրքով — առայժմ որոշ յայտնի չէ, այսքանը միայն գիտենք, որ գիտնական, բնագիտական եւ անտեսական յօդուածներ պիտի պարունակի ։

Հրատարակելիք ամսագրի ձեռնամուխ ուսանողները բաւական զարգացած եւ հասուն մարդիկ լինելով եւ մի եւ նոյն ժամանակ իրանք գտնուելով աշխարհիս ամեն տեսակ գիտութիւնների շտեմարանում, — Փարիզում, յոյս կայ, որ առատ եւ օգտակար յօդուածներ տան հայ հասարակութեան ։

Առ այժմ գլխաւոր հարցերից մէկն էլ տպարանի բացակայութիւնը լինելով, ընկերութիւնը աշխատում է ձեռք բերել մի համեստ տպարան ապագայ հրատարակելիք ամսագրի եւ այլ հայերէն հրատարակութիւնների համար ։

Փարիզում բնակւող հայոց իշխան Լուսինեանը ունի բաւական քանակութեամբ հայերէն տառեր, որոնցից երբեմն օգտւում է մի ֆրանսիական տպարանատէր. յոյս կայ որ իշխանը օժանդակ լինի ընկերութեան օգտակար ձեռնարկութեանը, տալով յիշեալ տառերը եւ օգնելով նոյն իսկ ուրիշ միջոցներով, քանի որ ընկերութիւնը դեռ եւս նիւթականապէս շատ աղքատ է ։ (Արձագանք)

ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Ի ՆՊԱՍՏ
ԴՊՐ. ՏԻԿՆԱՆՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Ի Յունվ. 27/8 փետր. 1890
ԸՆԴ ՀՈՎԱՆԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ
ՊԱՐՍԿ. ԴԵՍՊԱՆ ՎՍԵՄ. ՄՈՀՍԻՆ ԽԱՆԻ

Վսեմ.	Արիֆ	էֆ.	Ունճեան	Նախագահ
»	Էլիաս	»	Զայեան	Ատենապետ
»	Սեպուհ	պէյ	Մաքսուտ	Գանձապետ
Ազն.	Յովհաննէս	էֆ.	Թորոսեան	Ատենդպ.
»	Տր. Եազըճեան	էֆ.		Փոխ-Ատենդպ.

ԱՆԴԱՄՔ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ

Անտոն	էֆ.	Ազարեան
Արթաքի	խան	Նէվրուզ
Աւետիս	էֆ.	Թընկըրեան
Վսեմ. Պլունդ	փաշա	
Վսեմ. Գաբրիէլ	էֆ.	Նորատունկեան
Գասպար	»	Թօքաթլեան
Էօժէն		Բարպարօ
Վսեմ. Կարապետ	»	Խումարեան
Կարապետ	»	Սըվաճեան
Միհրան	»	Այանեան
Տր. Յարութիւն	»	Թիրեաքեան
Յովհաննէս	»	Լոսեան
Յովհաննէս	»	Կիւլպէնկեան
Յովհաննէս	»	Յակոբեան
Նշան	»	Հարէնց
Պաթիսթ	»	Տէօվլէթ
Սարգիս	»	Թաշճեան
Սերվաքի	»	Ալէքսանտրիտի
Վսեմ. Տիմիդրաքի	»	Եէնիսէհիրէա
Վսեմ. Տիւսար	փաշա	
Վսեմ. Օհան	»	Պաղտասարեան
Ահարոն	էֆ.	Մանուկեան
Գաւրիլ	»	Ֆընտըքլեան
Զարեհ	»	Նաւսուփեան
Մանուէլ	»	Շնորհքեան
Մարտիկ	»	Յակոբեան
Միհրդատ	»	Նորատունկեան
Մկրտիչ	»	Գազանճեան
Նշան	»	Փափազեան
Ռոպէռ	»	Լէվի
Տիմիդրի	»	Ժորժիատիս

Բուրաստան Մանկանց պատկերազարդ հանդիսի դեկտ. 15ի թիւը կը պարունակէ .

Որբուհին (Ս. Զօպանեան). —Արաբացի մը հետաքրքրութիւնը (Թարգմ.). — Դեղձերը (Թարգմ.). — Մ. Սթէնլի (Թարգմ.). —Պանդուխտ աղջկան մը յուշագրութիւնը (Ս. Գ. Մօզեան). — Համառօտ տեղագրութիւն Երուսաղեմի. —Մանկական զրօսանք ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՇՏՕՆԱՓՈԽՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՊԱՏՈՒԱՆՇԱՆՔ

Շէհրը Զօրի նախնական դատարանին ընդհանուր դատախազի օգնական անուանուեցաւ Ապտիւրրահման էֆէնտի, ընդհանուր դատախազի օգնական նախնական դատարանին Երթողրուլի ։

Երթողրուլի նախնական դատարանին ընդհանուր դատախազի օգնական անուանուեցաւ Ապտիւլրահման Նաշիտ էֆէնտի, ընդհանուր դատախազի օգնական նախնական դատարանին Շէհրը Զօրի ։

Երրորդ կարգի Շէֆաքաթ պատուանշան տրուեցաւ Օր. Ֆրանսուազ Օպարէի, դուստր Հանրային Պարտուց վարչական ժողովոյ նախագահ Պ. Օպարէի ։

Չորրորդ կարգի Մէճիտիյէ՝ Պ. Չէրվաթի, տէր եւ տնօրէն [illegible] պանդոկին ։

ՄԱՔՍԱՏԱՆՑ ՍԱՀՄԱՆՔ

Այն յանձնաժողովն, որ Թուրքիոյ եւ Ռուսիոյ միջեւ կնքելի մաքսային սակագնոց ինչ ինչ կէտերուն առթիւ ծագած անհամաձայնութիւնը կարգադրելու համար կազմուած էր, երէկ եւս ի նիստ գումարուելով աւարտեց իւր աշխատութիւնն, կայս. կառավարութեան շահուց նպաստաւոր որոշում մը տալով ։ Յանձնաժողովն ձեռնարկեց պատրաստել երկու կողման պատուիրակաց ստորագրելիք բրոթոքոլն ինչպէս նաեւ այն տեղեկագիրը, զոր օսմանեան պատուիրակք պիտի մատուցանեն Արտաքին գործոց նախարարութեան ։

Ի Բ. ԴՈՒՌՆ

Առեւտրական եւ Հանրօգուտ շինութեանց նախարար Զիհնի փաշա երէկ Բ. Դուռն երթալով տեսակցեցաւ Բարձր. Մեծ-Եպարքոսին հետ ։

ՕՏԱՐ ՊԱՏՈՒԱՆՇԱՆՔ

Բորթուգալի թագաւորը [illegible] պատուանշանի առաջին աստիճանը շնորհած է Մադրիտի օսմանեան դեսպան Թէվֆիք պէյի եւ նոյն պատուանշանի երրորդ աստիճանը՝ դեսպանատան առաջին քարտուղար Յովհաննէս Տէքիր էֆէնտիի ։ Կայս. Իրատէ մը արտօնած է այդ պատուանշանաց գործածութիւնը ։

ՀԻՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

Օսմանեան հիւպատոսաց կանոնագիրը քննելու եւ բարեփոխելու համար, երէկ Արտաքին գործոց նախարարութեան պաշտօնատան մէջ յանձնաժողով մը ի նիստ գումարուելով երկարօրէն խորհրդակցեցաւ ։

Սոյն Յանձնաժողովը կը կազմեն իրաւագէտ խորհրդական Կէչէր էֆէնտի, վիճակագրութեանց տնօրէն Համտի պէյ, հպատակութեանց դիւանի տնօրէն Օհան էֆէնտի եւ հիւպատոսական գործոց դիւանին առաջին քարտուղար Տիրան պէյ ։

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՇՆՈՐՀ

Վ. Հ. Սուլթանն հրամայած է պէտք եղածին չափ կրօնական գրքեր շնորհել Քարբերդի նահանգին մէջ արդէն հաստատուած եւ դարնան եւս հաստատելի նախնական վարժարաններու աշակերտաց ։ Ներքին գործոց նախարարութիւնը նահանգին կուսակալութեան հաղորդելով կայս. սոյն հրամանը տեղեկութիւն պահանջած է թէ ո՞րչափ գրքի պէտք ունին ։ Կուսակալութիւնն եւս պատասխանած է թէ 5000 օրինակի պէտք կայ բաշխուելու համար կարօտ աշակերտաց, որովհետեւ ցարդ հաստատեալ վարժարանաց մէջ 1500 աշակերտք կը գտնուին եւ միանգամայն կը հաշուի որ դարնան մէջ գրուելիք աշակերտաց թիւ 10,000ի հասնի ։

ԳԱՐԱՏԱՂԻ ԳՈՐԾԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

Կըսուի թէ հանգուցեալ Պ. Բլամէննաճի տեղ առայժմ ոչ ոք պիտի կարգուի իբր Գարատաղի գործակատար ։ Նիմրէնի ծովեզերեայ ապարանքը Բիէա Գարաեօրկէվիչ իշխանին տրամադրութեան ներքեւ պիտի դրուի, որ վերջէն թերեւս Գարատաղի պաշտօնական ներկայացուցիչ անուանուի ի Կ. Պոլիս ։

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Երկրագործական Դրամատան վարչական ժողովն երէկ ի նիստ գումարեցաւ Առեւտրական նախարարութեան պաշտօնատան մէջ, նախագահութեամբ Պետական Խորհրդոյ անդամ Վսեմ. Նուրեան էֆէնտիի եւ խորհրդակցութիւններ կատարեց նոյն դրամատան տնօրէնին կողմէ գործադրուած այլ եւ այլ կարեւոր տնօրինութեանց վրայ ։

Ներկայ էին Դրամատան ընդհանուր տնօրէն Վսեմ. Միքայէլ էֆէնտի Փորթուգալ, գեր-տնօրէն Շէվքէթ էֆէնտի, երկրագործական ընդհանուր տնօրէն Նուրի էֆէնտի, Առեւտրական Սենեկի նախագահ Ազարեան էֆէնտի, նոյն Սենեկի անդամ Տիմիթրաքի էֆէնտի, երկրագործական կեդրոնական քննիչ Ազաթոն էֆէնտի եւ կրթական նախարարութեան կողմէ Մուսթաֆա էֆէնտի ։

* *

Պրուսայէն կը գրեն թէ երկրագործական դրամատան նորահաստատ մասնաճիւղը, որ առ այժմ 5000 ոսկւոյ դրամագլուխ մը ունի, առանց հաշուելու զանազան գումարներ զորս կը պահանջէ տեղական կառավարութենէն կամ տասնորդի հաշիւներէ, սկսեր է 100էն 600 դրամ փոխ տալ երկրագործաց, գրաւի փոխարէն ։ Կ՚երեւի սակայն թէ յիշեալ դրամատան գրութիւնը երկրագործաց չընծայեր այն առաւելութիւնները զորս կը յուսային վայելել երկրագործական պանքայի մը հաստատմամբ ։ (Լ. Հէրալտ)

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՎԻՃԱԿ

Մուսուլի գաւառական լրագրոյն մէջ կը կարդանք թէ քոլէրան, որ նահանգին մէջ ճարակելով [illegible] օրուան մէջ բաւական զոհեր ըրած էր, բոլորովին անհետացեր է եւ այս պատճառաւ հաստատուած մաքրմնոցք ու շղթայք եւս վերցուեր են ։

* *

Քարբերդի գաւառական լրագիրը կը հերքէ աւելի առաջ [illegible] կողմէ տրուած այն լուրը, թէ առողջապահական վարչութիւնը հրահանգ տուած է նահանգին առողջապահական պաշտօնէից՝ ամեն միջոց ձեռք առնուլ արգիլելու համար քոլէրայի ճարակումն ի Քարբերդ ։

Գաւառական լրագիրը կը յարէ թէ նահանգին եւ շրջակայից մէջ այդ կարգի հիւանդութիւն մը բնաւ երեւան եկած չէ, թէ հանրային առողջութիւնն ամենալաւ վիճակի մէջ կը գտնուի եւ թէ առողջապահական միջոցներ ձեռք առնելու համար հրահանգ տրուած ըլլալու լուրն եւս ըստոյգ չէ ։ Քարբերդի լրագիրը կ՚ըսէ նաեւ թէ Քոլէրան, որ աշնան երեւան եկած էր ի Պաղտատ եւ ի Մուսուլ, բոլորովին անհետացած է այդ կողմերէն ։

ԼԱՏԻՆ ԿԱՐՏԻՆԱԼՔ

Կըսուի թէ յառաջիկայ մարտ ամսոյ մէջ Պապը կարտինալութեան աստիճանի պիտի բարձրացունէ քանի մը լատին եկեղեցականներ, որոց մէջ կը գտնուին Կ. Պոլսոյ պապական նուիրակ Տ. Պօնէթի եւ Երուսաղեմի լատին Պատրիարք Տ. Բիավի ։

ԱՆԳԼ. ՎԱՐԺԱՐԱՆՔ

Բերայի թաղապետութիւնը անգլիական հիւպատոսարանին հաղորդելով մայրաքաղաքիս բոլոր վարժարանաց փակման հրամանը, հրաւիրած է զայն՝ փակել տալ նաեւ անգլ. եւ սկովտիական վարժարանները ։ Լ. Հէրալտ գրել կուտայ այս առթիւ, թէ վարժարանաց բաց մնալէն աւելի, փողոցներու անմաքուր վիճակը կրնայ վնասել հանրային առողջութեան ։

ԴԵՍՊԱՆԱԿԱՆ ՀԱՑԿԵՐՈՅԹՔ

Շուէտական դեսպան Պ. Բէօլթէրըքլօ երէկ իրիկուն ճոխ հացկերոյթ մը տուաւ դեսպանատան մէջ ։ Ներկայ էին արարողապետ Մունիր փաշա, Արտաքին գործոց նախարարութեան արարողապետ Իպրահիմ պէյ, օգնականը Ղալիպ պէյ եւ այլք ։

* *

Եւրոպական տարեգլխոյ առթիւ, անգլ. դեսպան Սըր Ուիլեըմ Հուայթ նախընթաց գիշեր հացկերոյթ մը տուաւ ի պատիւ պարսկական դեսպան Միրզա Մոհսին Խանի եւ Թէհրանի անգլ. դեսպանատան զինուորական կցորդին որ մայրաքաղաքս եկած է, աստի իւր պաշտօնատեղին ուղեւորելու համար ։

Սեղանէն յետոյ երեկոյթ մը տեղի ունեցաւ ։

ԿՐԷՏԷ

Կայս. կառավարութեան ձեռք առած միջոցներուն շնորհիւ, Կրէտէի մէջ խաղաղութիւնն ու հանրային ապահովութիւնը վերահաստատուած ըլլալով, Բէթիմոյի ժողովուրդը շնորհակալեաց եւ երախտագիտութեան գիր մը մատուցած է առ Վ. Հ. Սուլթանն ։

ՄՈՆՏԷՊԷԼԼՕ ԿՈՄՍՆ ՈՒ ԿՈՄՍՈՒՀԻՆ

Կ. Պոլսոյ ֆրանսական դեսպանն ու դեսպանուհին, որք Բարիզու մէջ ինֆլուէնձայէ բռնուած էին, ապաքինած ըլլալով, ամսոյս վերջը մայրաքաղաքս պիտի վերադառնան ։

ՌՈՒՄԷԼԻԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

Մայրաքաղաքիս պուլկարական գործակատար Պ. Վուլքովիչ երէկ Բ. Դուռն հրաւիրուելով տեղեկութիւն պահանջուեցաւ իրմէն այն զրոյցներու վրայ, որք երէկ եւ նախընթաց օր շրջած էին Րումէլիի երկաթուղեաց նկատմամբ ։ Պ. Վուլքովիչ անմիջապէս խնդիրն հեռագրաւ հաղորդեց պուլկար կառավարութեան, որ պատասխանեց թէ այդ զրոյցք բոլորովին անհիմն են եւ թէ պուլկար կառավարութիւնը կայարանաց մէջ ոստիկաններ դրած է միայն արձանագրելու համար վաճառականաց եւ ուղեւորաց կողմէ եղած բողոքները ։

Պ. Վուլքովիչ երէկ Բ. Դրան հաղորդեց իւր կառավարութեան այս պատասխանը ։

ԹԱՍՖԻՅԷԻ ԱՐԺԷԹՈՒՂԹՔ

Ըստ մասնաւոր օրինաց՝ շրջաբերութեան հանուած 233,439,390 ղրուշի Թասֆիյէի արժէթղթերէն 202,674,910 ղրուշնոցը, մինչեւ 305 տարւոյ նոյեմբերի վերջը բաժնուած է թէ աստ եւ թէ ի գաւառս գտնուող պահանջատէրց ։ Ասոնցմէ 30,764,480 ղրուշի կը գտնուի յատուկ արկղին մէջ ։ Բաշխուած արժէթուղթերէ 174,129,200 ղրուշի մինչեւ նոյն թուականը պարտուց փոխարէն ետ առնուած են ։ Հետեւաբար 28,545,710 ղրուշի արժէթուղթ այժմ կը գտնուի հրապարակի վրայ ։

ԱՒԱԶԱԿՈՒԹԻՒՆ

Տէրսիմի հռչակաւոր աւազակներէն Գոչ Օղլու Ահմէտ, Խօմէր Հասան եւ Քէրիմ Օղլու Խալիլ, Օմաճազի [illegible] դիմելով, հնազանդութիւն յայտնած եւ ներողութիւն խնդրած են ։ Տեղական կառավարութիւնը ծանուցած է իրենց թէ ներողութեան արժանացած են ։

Կ. Պոլսոյ աւստրիական դեսպանատան նախկին խորհրդական Պառոն տը Վէյքընօ մեռեր է ի Կրաց ։

—Ադր. Պոլսոյ Յունաց մետրապոլտի հրաժարականն ընդունուած ըլլալով, Պատրիարքարանի Սինոդն այս առթիւ մետրապոլտական զանազան փոփոխութիւններ որոշած է ։

—Անգլ. հիւպատոս Պ. Բէնչ Տարտանէլէն մայրաքաղաքս վերադարձաւ ։

—Հէրալտ կ՚իմանայ թէ պուլկարաց կողմէ ի գործ դրուած կեղեքմանց վրայ, 300,000 իսլամք որոշեր են յառաջիկայ ամրան գաղթել Պուլկարիայէն ։

—Եղեռնագործ ատեանն երէկ զբաղեցաւ սպանութեան դատով մը ։ Ամբաստանեալն էր Սինոպլու Իսմայիլ անուն արզուհալճի մը, որ ի Պալատ իւր կինը՝ Ֆաթիմէն սպաննած էր դաշունով ։ Ամբաստանելոյն հարցաքննութիւնք եւ վկայից յայտարարութիւնք լսուելէ յետոյ, հաստատուեցաւ թէ Սէհէր անուն կին մը անբարոյականութեան առաջնորդած էր զՖաթիմէ ։ Դատարանն այդ կինն եւս դատելու համար, դատն ուրիշ օրուան յետաձգեց ։

—Կարնոյ նահանգին ժանտարմաներու հրամանատար Սըրրը պէյ հանգստեան կոչուած է հազար հարիւր ղրուշ ամսաթոշակով ։

—Մուսուլի լրագրոյն մէջ կը կարդանք թէ, Քէրքուքի հեծելազօրաց Միրլիվա Մահմուտ փաշա, որ Զ. զօրաբանակի կեդրոնին մէջ՝ ի Պաղտատ կը գտնուէր զինուորական ինչ ինչ խնդիրներու պատճառաւ, անպարտ արձակուեր եւ իւր պաշտօնատեղին վերադարձեր է ։

—Անգլ. [illegible] պահակ շոգենաւուն սեղանայարդարը նախընթաց օր ցամաք ելած ըլլալով, Քալաֆաթեէրի կոչուած տեղը շուն մը ոտքէն խածեր է ։ [illegible] բժիշկը բացակայ գտնուելուն, սեղանայարդարը գերմանական պահակ շոգենաւ փոխադրեր են ու կը դարմանուի ։

—Ներքին գործոց նախարարութիւնը տեղեկանալով որ քաղաքային պաշտօնեայք ոմանք զինուորագրութեան գործին մէջ յետաձգմանց պատճառ կ՚ըլլան, ծանոյց ամեն կողմ որ այդ առթիւ հարկ եղած դիւրութիւնն ընծայեն առանց յետաձգման ։

—Ներքին գործոց նախարարութիւնը, կայսերական հրամանի մը համաձայն, ծանոյց Պէյրութի կուսակալութեան, որ քաղաքէն դուրս յատուկ շէնք մը շինուի վառօդարանի համար, 85,000 ղրուշ ծախսելով նահանգին գանձէն, որովհետեւ այժմու վառօդարանն, որ քաղաքին մէջտեղ կը գտնուի, կրնայ վտանգ մը պատճառել իւր պարունակած մեծաքանակ վառօդներուն պատճառաւ ։

—Երէկ Կէտիկ Փաշայի մէջ, Սերովբէ անուն սրճագործ մը յանկարծամահ եղաւ, հանգուցեալն վաթսուն տարեկան էր ։

—Սամսոնի հաշուակալ Թահսին էֆէնտի մեռեր է յետ սակաւօրեայ հիւանդութեան ։ Թահսին էֆէնտի քառասուն տարիէ ի վեր կը ծառայէր կառավարական պաշտօններու մէջ ։

— Նիկոմիդիոյ չուխայի գործարանը տանող ճամբան նորոգուեր եւ տասն երկու կամուրջներ շինուեր են ։

—Վերաքննիչ ատենի պատժական ճիւղը վեց ամսուան բանտարկութեան դատապարտեց Եանքօ անուն նպարավաճառ մը իբրեւ գողօնաթաքոյց ։

—Ներքին գործոց նախարար Մէնիր փաշա երէկ դարձեալ հիւանդ ըլլալով իւր պաշտօնատեղին չգնաց ։ Ն. Վսեմութիւն ապաքինած ըլլալով, վաղը պիտի երթայ իւր պաշտօնատեղին ։

—Բերայի կառավարիչ Էմրուլլահ էֆ., որ մէկ քանի օրէ ի վեր հիւանդ էր, բոլորովին ապաքինած ըլլալով, երէկ իւր պաշտօնատեղին գնաց ։

—Մախսուսէի շոգենաւուց հնոցապաններէ մին նախընթաց իրիկուն դաշոյնով վիրաւորեց իւր կինն, որ ութ ամսուան յղի էր ։ Թէեւ անմիջապէս դարմաններ եղան, սակայն կնոջ կեանքը վտանգի մէջ է ։ Ամուսինը խոյս տուած է ։

—Զինուորական նաւագործուաց խումբերուն տրուելիք փոքր սրինգներն ու թմբուկները պիտի համապատասխանեն նոր դրութեան, որպէսզի [illegible] կարելի ըլլայ եղանակել ամեն տեսակ եղանակներ ։ Առ այդ յատկացեալ զինուորք փորձեր կը կատարեն ամենայն փութեռանդութեամբ ։

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
ՊԻՆ ՊԻՐ ՉԷՇԻՏ

21 Պաղչէ Գաբու Մաքսատան դիմաց 21

Սոյն Վաճառատուն պատիւ ունի ծանուցանել իւր բազմաթիւ յաճախորդաց, թէ Կաղանդի առթիւ Եւրոպայէ բերել տուած է ամեն ճաշակի յարմար եւ վերջին նորաձեւութեանց համապատասխանող այլ եւ այլ առարկայներ նուէրի համար, խիստ դիւրամատչելի գներով ։ Մասնաւորաբար տղայոց խաղալիկներ, արդուզարդի եւ կարի գեղեցիկ տուփեր, ժամացոյցներ, շղթայներ, հոտաւէտ նիւթեր, կանանց յատուկ փոքրիկ պայուսակներ, [illegible] թղթապանակներ, գրասենեկի պիտոյքներ, տեսակ տեսակ նուագարաններ, ըմպելիք, պաքսիմաթներ եւ այլն եւ այլն ։

Ամեն անոնք որք Կաղանդի նուէրներ գնել կը փափաքին կրնան դիմել այս վաճառատունն, ուր պիտի գտնեն գեղեցիկը՝ ճաշակին ու աժանին հետ զուգորդեալ եւ մեծապէս գոհ պիտի մնան իրենց այցելութիւնէն ու գնումներէն ։

969 2—9

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

ԱՐԵՒԵԼ. ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԷՆ

Բարիզ, 3 յունուար

Երէկ զրոյց շրջեցաւ թէ Պ. տը Լէսէբս ծանրապէս հիւանդ էր ։ Ըստուգուեցաւ վերջէն թէ չափազանցութիւն կայ լուրին մէջ ։ Պ. տը Լէսէբս թեթեւապէս անհանգիստ է միայն ։

Լոնտոն 2 յունուար

Բորդ Բուստօս Ուադդէյլ Թատրոնն հրդեհի ճարակ եղաւ ամբողջովին ։ Բարեբաղդաբար անձի կորուստ չկայ ։

Կ. ՊՈԼՍՈՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԷՆ

Պրուսէլ, 2 յունուար

Լաքէնի արքայական դղեակը մասամբ հրոյ ճարակ եղաւ ։ Բոլոր հաւաքածոյներն այրեցան ։ Մեքսիքայի կայսրուհին հազիւ կրցաւ ազատիլ՝ թագուհին անմիջապէս մեկնեցաւ ի Լաքէն ։ Հրդեհը ծագեցաւ միջօրէէն յետոյ ժամ 2¼ին ։

Բարիզ, 1 յունուար

(Ուշացեալ հեռագիր)

Նախագահական պալատան մէջ Նոր Տարւոյ ընդունելութեան առթիւ, պապական Նուիրակ Տ. Բոթէլլի ներկայացնելով դեսպանական մարմինն առ Պ. Գառնօ, ըսաւ.

«Խորին յարգանաց զգացումներով կուգանք մատուցանել ձեզ, յանուն մեր վեհապետներուն և մեր ալ կողմէ, ջերմագոյն բարեմաղթութիւններ ձեր երջանկութեան և ֆրանսական ժողովրդեան բարօրութեան համար. կը խնդրենք երկնային Նախախնամութենէն որ պաշտպանէ ձեր ազնիւ հայրենեաց ապագայն, որպէսզի ֆրանսական ժողովուրդը կարենայ իր անսպառելի հանճարով սկսող տարւոյն մէջ փառաւոր էջեր յաւելուլ քաղաքակրթութեան տիեզերական պատմութեան։»

Պ. Գառնօ, ի պատասխանի, շնորհակալ եղաւ դեսպանական մարմնոյն զգացմանց և բարեմաղթութեանց վասն Ֆրանսական Հանրապետութեան և վասն Նորա Նախագահին. «Անցեալ տարւոյն խաղաղութեան և յառաջդիմութեան մեծ գործը պիտի շարունակենք, ըսաւ, լուսամիտ աջակցութեամբն և կամքով այն ազգաց կառավարութեանց որք այնքան արժանաւոր ներկայացուցիչներ ունին ի մեզ։»

Լոնտոն, 2 յունուար

Լորտ Սալզպըրի Ինֆլուէնցայէ բռնուած էր, բայց տակաւ կ'ապաքինի։

Աթէնք 2 յունուար

Շաքիր փաշա ցուցակն հրատարակեց այն Կրետացւոց որք կայսերական Հրովարտակին տրամադրութեանց համեմատ ներման չեն արժանացած, այսինքն անոնց որք իբրեւ ապստամբութեան գլուխ կամ գրգռիչ դատապարտուած են, կամ Յունաստանի հետ միացում խնդրած են։

Հռոմ, 1 յունուար

Ումպէրթօ Թագաւոր Ծերակոյտի և Երեսփոխանութեան պատգամաւորութեանց պատասխանելով, որք ամանորի առթիւ իրենց խնդակցութիւնները մատուցած էին, գոհութիւն յայտնեց որ Նոր Տարին շատ նպաստաւոր կերպիւ կը սկսի՝ ամեն ազգաց հաստատ խաղաղասիրութեան շնորհիւ։

Փեշթա, 2 յունուար.

Ամանորի առթիւ ազատական կուսակցութիւնը փառաւոր ցոյց մ'ըրաւ՝ վստահութիւն յայտնելով Պ. Թիզայի և նորա նախարարութեան վրայ, ինչպէս և հունգարական հայրենեաց ապագային վրայ։ Պ. Թիզա, իւր կուսակցութեան խնդակցութեանց ի պատասխան, շատ ամրապինդ վիճակի մէջ ցուցուց Երրեակ Դաշնակցութիւնն, որ Եւրոպիոյ խաղաղութիւնը կ'երաշխաւորէ, որ շատ հարկաւոր է նաեւ Հունգարիոյ։ Պ. Թիզա յարեց թէ իւր պաշտօնին վրայ պիտի մնայ ցորչափ վայելէ իւր վեհապետին և մեծամասնութեան վստահութիւնը։

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 22 դեկտեմբեր

Օսմանեան Քօնսօլիտէ

Նէճ երկրդ գոյ. (Մէյտ. Ի. Սէրի		19 4
Վօրային գոցուելէն վերջը	»	19 4
Բերայի մէջ	»	— —
Աւասատուն բացուելուն	»	19 10 1/2
Կէս օրին	»	19 9 1/2

ԻՍԹԻԳՐԱԶԸ ՏԱԽԻԼԻ

Նէճ երկրդ	45 12
Այս առաւօտ	45 14
Կէս օր	45 14

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԷԹՂԹՈՑ

Փոխառութիւն	A. Սէրի	37
»	B. »	20
»	C. »	19 10 1/2

ԲԱԺՆԵՏՈՄՍՔ

Սօսիէթէ ժէնէրալ...........	Անգլ.	Լր.	4 13
Քրէտի ժէնէրալ...........	Օսմ.	»	8 21
Զանք տը Գօնս...........	»	»	7 7
Սօս. Շամէ է վալէօր...........	»	»	4 26
Թրամվէյ...........	»	»	462 1/2
Բուժէլէ երկաթուղի...........		Ֆր.	74 75
Օպլիկասիօն տը Բրիօրիթէ		»	— —
Բաժնեթուղթ Լավրիօնի....			121 1/2

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Բարիզ, 2 Յունվար ժամ 3 վայր. 40 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 3 %	87 75
» 4 1/2 %	106 05
Օսմանեան քօնսօլիտէ Սէրի Դ.	17 60
Օսմանեան երկաթուղի	74 75
» Լէժիի բաժնեթուղթք	չկայ
Զանք Օթօման	533 75
Գրէտի Լիօնէ	690
Իտալական Ռանթ 5 %	95 40
Հիւլլէնական 5 %	477 50
Բրիօրիթէ Թիւրք	480
Եգիպտական միացեալ	468 75
Զանք տը Բարի	800
Օսմ. մաքս. արժէթուղթ	403
Սուէզի ջրանցք	2320
Ջէք Լոնտրայի վրայ	25 24-25
Սպանիական արտաքին	73 1/2

Լոնտոն, 2 Յունվ. ժամ 6 վայր. — երեկոյ

Անգլ. քօնսօլիտէ	97 1/4
Օսմ. » Սէրի Դ.	17 1/2
» » » » գոյ	— —
» » » Ա.	37 1/2
» » » Բ.	22 1/8
» » » Գ.	17 1/2
Փոխառութիւն 1877	101 3/8
Զանք Օթօման........	11 5/16
Եգիպտական միացեալ (Իւնիֆիէյէ)	92 13/16
» առանձ. (Բրիվիլէժիէ)........	103 1/8
Տայրա Սանիէ	83
Տօմանիալ (փոխառ. Բօյլեր)........	102
Հիւլլէնական 5 %	— —
Մոնօբոլ »	— —
Ռուսական 1889	93 1/2
Փոխանակութիւն Բարիզի վրայ	25 25

ԲԱՐԻԶ ԲԹԻԹ ՊՈՒՐՍ

Բարիզ, 2 Յունվ. ժ. 10 վ. 10 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 3 %	87 86
Օսմանեան քօնսօլիտէ Դ.	17 65
Օսմանեան երկաթուղի	74 75
Եգիպտական միացեալ........	468 75

Վիէննա, 2 Յունվ ժամ 10 վայր. —

Օսմանեան երկաթուղի	37 60
» Լէժիի բաժնեթուղթք........	116 25
Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	118 20

Պէրլին, 2 Յունվ. ժամ 10 վայր. —

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	20 35
Բուլղ. Թղթադրամ	219 1/4
Օսմանեան երկաթուղի	83 70
Օսմանեան քօնսօլիտէ Սէրի Դ.	17 40

ՏԱՃԿԱՀԱՅՈՑ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

(Շարունակութիւն և վերջ երէկի թիւէն)

Առաջին կարգի դպրոցների նպատակն է ուսուցման միջոցով թէ՛ հարըստացնել մանկանց մտաւոր աշխարհըն և թէ դաստիարակել նոցա, իսկ երկրորդ տեսակ դպրոցներում թէեւ շարունակվում է դաստիարակութիւնը, բայց սանիկներն այնտեղ պատրաստվում են կեանքի մի որոշ գործունէութեան ճիւղի համար, նորանք ստանում են այստեղ գործնական կրթութիւն, որ բոլորովին դուրս է առաջին տեսակ դպրոցների նպատակից։ Դաստիարակող ուսումնարանների և բարձրագոյն մասնագիտականների մէջ քաղաքակիրթ և հարուստ ազգերն ունին նաեւ միջնակարգ դպրոցներ, ժողովրդական դպրոցների թողած թերին լրացնելու և նախապատրաստելու բարձրագոյնի համար։

Արդ այս դպրոցների ո՞ր տեսակն ունին Տաճկահայք։ Յաւօք սրտի պիտի պատասխանենք՝ ոչ մի տեսակն և բոլոր տեսակները։ Տաճկահայք ունին քաղաքներում ծխական դպրոցներ, իսկ շատ սակաւաթիւ գիւղերում ժողովրդական վարժարաններ. բացի սորանից, մի քանի վանքեր ունին դեռ իրանց ժառանգաւորաց հին վարժարանները, իսկ Պոլսում կան մի երկու հատ միջնակարգ մասնաւոր հայկական դպրոցներ և մի կենտրոնական ազգային վարժարան։ Գիւղական և Թաղական ուսումնարանները պիտի համապատասխանեն առաջին կարգին, այսինքն՝ դաստիարակող կամ ժողովրդական դպրոցներին, իսկ ժառանգաւորաց դպրոցները, մասնաւոր և կենտրոնական վարժարանները միջնակարգ դըպրոցներին։

Ժողովրդական ուսումնարանները պիտի պիտի ունենան իրանց հաստատուն ծրագիրն, որի նպատակը պիտի լինի այն բոլոր անհրաժեշտ գիտութեան պաշարը տալ, որ կարեւոր է իւրաքանչիւր մարդու և սանիկի բարոյական կամքին ուղղութիւն տալ։

Այդպիսի դպրոցների դասընթացը 6-8 տարի է տեւում և աշակերտներն ուսանում են գիտողական ուսման միջոցով ճանաչել իրանց շրջապատողներին, հայրենագիտութեամբ իրանց հայրենիքը, մայրենի լեզու, թուաբանութիւն, աշխարհագրութիւն, բնագիտութիւն, ազգային և ընդհանուր պատմութիւն և կրօնագիտութեան տարրերը։

Եթէ քննենք Տաճկահայոց Թաղական դպրոցների ծրագիրներն, ոչ միայն վերոյիշեալ գիտութիւնները, այլ նաեւ ուրիշ շատ օգտակար գիտութիւններ եւս կը գտնենք շարած, սակայն բաւական չէ միայն հարուստ ծրագիր ունենալը, պէտք է նաեւ գործադրել այդ։ Տարրական դպրոցի դասատուն պէտք է յատուկ պատրաստութիւն ունենայ, որ կարողանայ անցնել այնպիսի առարկայք, ինչպէս օրինակ հայրենագիտութիւնն է և կամ նոյն իսկ իրազննութիւնը։ Երբ կը խօսենք դպրոցների կազմակերպութեան մասին, այն ժամանակ ընթերցողը կը տեսնի, որ ոչ մի միջոց չը կայ՝ անցընելու հարուստ ծրագիրները, այլ նոքա գրուած են ձեւի համար։ Անձամբ տեսած եմ Տաճկահայոց դպրոցներ, ուր ծրագրի մէջ նշանակած է ինչ կարեւոր է, սակայն ծանօթանալով ուսուցչին և նորա դասատուութեան, տեսել եմ, որ նոքա միայն գրագիտութիւն կարող են ուսուցանել և այն մեծ դժուարութեամբ։ Գիւղական և յետընկած մի Թաղական դպրոցում եւս կը գտնէք ծրագրի մէջ ֆրանսերէն լեզու, սակայն ո՞վ է ուսուցանողըն և ո՞վ է սովորողը, ափսո՜ս վատնուած ժամանակին։

Մեր ձեռին է այժմ կենտրոնական վարժարանի[1] ծրագիրը 1886ին տպուած. այդ ծրագրի երես 11 կրթական յատագծի մասին մէջ յօդ. 14 խօսվում է ընդունուող աշակերտաց գիտութեան մասին, որ պիտի համապատասխան լինի ժողովրդական ուսումնարանի ծրագրին։ Այդ ծրագրով աշակերտը ժողովրդական դպրոցում պիտի ուսած լինի քրիստոնէական և սրբազան պատմութիւն, հայերենից գրաբար քերականութիւն, թարգմանութիւն և պարզ շարադրութիւն (խմբագրութիւնք), օսմաներէն և ֆրանսերէն քերականութիւն և թարգմանութիւն, ազգ. և ընդհ. պատմ. (հին), աշխարհագրութիւն, թուաբանութիւն և սկզբունք երկրաչափութեան, գեղագրութիւն և գծագրութիւն։

Ինչպէս տեսնվում է, բնական գիտութիւնները գոյութիւն չունին տարրական դպրոցում, աշխարհաբարի գոյութիւնն եւս աւելորդ է համարուած, մինչեւ այդ միայն պիտի աւանդուէր տարրական դպրոցում։ Չը նայելով, որ այս ամենն աւանդվում է առանց ներքին կապի, որպիսի թերութիւն և մեր դպրոցներն ունին, և չէ կազմում մի ամբողջութիւն, դարձեալ գոհ պիտի լինենք, եթէ նորանց տարրական դըպրոցներն այդքանն էլ տան։

Աւելացնենք այս թերութեանց վերայ և այն, որ մարմնոյ կրթութեան գաղափարը գոյութիւն չունի, կարծես, Տաճկահայոց համար, նոցա դըպրոցների ցանկութիւնն է միայն միտքը հարստացնել զանազան և անկապ գիտութիւններով, իսկ բարոյական—կրօնական կրթութեամբ սնուած և մարմնով առողջ սերունդ պատրաստելու համար նոքա գիտակցութիւն չ'ունին։ Շատ կարելի է, նոքա ցոյց տալով իրանց հարուստ ծրագիրները, արդարանալ կամենան, թէ մեր դպրոցները նպատակ ունին, սակայն նոյն իսկ այդ հարուստ ծրագիրները կ'ապացուցանեն նպատակի գիտակցութիւնից զուրկ լինելը։

Պէտք է ասածներիս աւելացնեմ եւ այն, որ այդպիսի հարուստ ծրագրով դպրոցներ են հիմնվում յանկարծ Վանի եւ Կարնի գիւղերում, իսկ դասատու, տնօրէն, տեսուչ է նշանակվում մի ադէտ տիրացու, որ սուրբ Կարապետի վանքում գրել կարդալ է սովորել. ո՞ւր է հապա նպատակի գիտակցութիւնը։

Որոշ նպատակի գիտակցութիւնը պակաս է նաեւ միջնակարգ կոչուած դպրոցներից, իբրեւ օրինակ առնում եմ Ղալաթիոյ կենտրոնական վարժարանը, որ հարեւանցօրէն ասելով, միակ բարձր եւ բարձրագոյն դպրոցն է ամբողջ Տաճկահայոց։

Այդ վարժարանը 5 տարուան դասընթաց ունի երկու շրջանով, առաջին շրջանը աւարտվում է 3 տարում. երկրորդը 2 տարում։ Արդ ես յառաջ կը բերեմ այդ վարժարանի ծրագիրն եւ թող մէկն ինձ ասէ, թէ ի՞նչ դըպրոց է դա, մասնագիտակա՞ն, թէ ժողովրդական, թէ համալսարան։

Ցուց. 15.— Կեդրոնական վարժարանի առաջին եռամեայ շրջանին մէջ պիտի աւանդուին։

Կրօնագիտութիւն.

Հայերէն.— Ընդարձակ Քերականութիւն, գրագիտութիւն աշխարհաբառ եւ գրաբառ, վերծանութիւն հին եւ նոր հեղինակաց։

Օսմաներէն.—Արաբերէն եւ Պարսկերէն Քերականութիւն, Օսմաներէն շարագրութիւնք, Թարգմանութիւն Փրանսերէնէ յՕսմաներէն եւ փոխադարձ։

Ֆրանսերէն.— Քերականութիւն ամբողջ, Թարգմանութիւն Հայերէնէ ի Ֆրանսերէն եւ փոխադարձ, տարերք մատենագրութեան. միջակ խմբագրութիւնք։

Պատմութիւն.—Ազգային եւ Օսմանեան պետութեան, համառօտ պատմութիւն հին եւ Նոր ազգաց։

Աշխարհագրութիւն.—Քաղաքական եւ պատմական եւ մասնաւորապէս Թուրքիոյ։

Ուսողութիւն.—Թուաբանութիւն տեսական եւ գործնական եւ վաճառականական, գրահաշիւ ցվերջ Բ. աստիճանի, երկրաչափութիւն տարրական, երկրաչափական խնդրոց գրահաշուով լուծումը, եռանկիւնաչափութիւն։ Անդաչափութիւն։

Բնական գիտութիւն. — Բնագիտութիւն, Բնական պատմութիւն եւ Տարրալուծութիւն արհեստական։

Իրաւագիտութիւն.—Տարերք իրաւագիտութեան եւ Օսմանեան Օրէնսդրութեան։

Վաճառականութիւն.— Տոմարակալութիւն, վաճառականական աշխարհագրութիւն եւ օրէնք։

Առողջաբանութիւն.

Գծագրութիւն.

Սղագրութիւն.

Ցուց. 16.—Կեդրոնական Վարժարանի Բ. երկամեայ շրջանին մէջ պիտի աւանդուին։

Կրօնագիտութիւն.

Հայերէն.—Բնական Քերականութիւն, Մատենագրական, լուծումն գլխաւոր հայ հեղինակաց, ստուգաբանութիւն եւ բաղդատական քերականութիւն։

Օսմաներէն.—Դպրութիւն եւ խմբագրութիւնք։

Ֆրանսերէն.— Քննական ընթերցումն մատենագրաց եւ խմբագրութիւնք։

Պատմութիւն. — Ընդհանուր Ազգաց, քաղաքակրթութեան պատմութիւն։

Աշխարհագրութիւն.—Ընդհանուր Ազգագրութիւն (վերջին ուղեւորութիւնք)

Ուսողութիւն.—Գրահաշիւ։

Երկրաչափութիւն, վերլուծական երկրաչափութիւն, գործնական տեղագրութիւնք։

Եռանկիւնաչափութիւն, մակարդակ եւ գնդաձեւ։

Մեքենագիտութիւն։

Տիեզերագրութիւն։

Բնական գիտութիւնք.—Բնապատմութիւն, (բուսաբանութիւն, երկրաբանութիւն, հանքաբանութիւն)։ Տարրալուծութիւն, (անգործարանաւոր եւ գործարանաւոր)։ Բնագիտութիւն, հանդերձ ուսողութեան գործածութեամբ։

Իմաստասիրութիւն.—Հոգեբանութիւն, տրամաբանութիւն, բարոյագիտութիւն եւ պատմութիւն իմաստասիրութեան։

Քաղաքական տնտեսութիւն.

Իրաւագիտութիւն.—Օսմանեան եւ Ազգային օրէնսդրութիւն եւ միջազգային իրաւունք։

Ելեւմտական գիտութիւն.

Մանկավարժութիւն.

Ցուց. 17—Վարժարանի եռամեայ եւ երկամեայ կրկին շրջաններու իւրաքանչիւր տարւոյ կրօնագիտութեան ուսման բաժանումներն այժմէն Կեդրոնական վարչութեան Կրօնական Ժողովը սահմանելով պիտի յանձնէ խնամակալութեան առ առաւելն մինչեւ Փետրվար 1։ Այս ուսմանց դասատուաց ընտրութիւնն խնամակալութիւնն ինք կը կատարէ Կրօնական Ժողովոյ կողմանէ վկայեալ Եկեղեցականաց մէջէն։

Այդ ծրագիրը կարդացողը մի եզրակացութեան կարող է գալ, թէ սորա յօրինողները չեն իմացել, թէ ի՞նչ են ցանկանում, նոքա որոշ նպատակ աչքի առաջ չեն ունեցել։ Մի առաւելութիւն միայն ունի այս ծրագիրը, որ օգտակար գիտութիւններից օգտակարագոյններն են ընտրուած։ Ողորմելի տարրական դպրոցից աւարտածն յանկարծ երկրորդ տարուան մէջ պիտի ուսանի եռանկիւնաչափութիւն, վաճառականական օրէնք, իսկ նա, որ երբէք բնագիտութիւն չէ ուսել, յանկարծ բոլոր բնական գիտութիւնները միանգամից պիտի ուսանի։

Առաջին շրջանի ծրագիրը քննելով, տեսնում ենք, որ այդ դասընթացով կամեցել են մի վաճառականական դպրոց ունենալ։

Երկրորդ շրջանի ծրագիրը ցոյց է տալիս, որ այդ բոլորովին անկախ է առաջին շրջանից եւ մի տեսակ փիլիսոփայական ֆակուլտէտ եւ իրաւագիտականի խառնուրդ է, ապացոյց դորան պիտի աւանդուին պատմութեան իմաստասիրութիւն (.՞.՛), հոգեբանութիւն, բարոյագիտութիւն, տրամաբանութիւն եւ դաստիարակութիւն, իրաւագիտութիւն եւ ելեւմտական գիտութիւն, որ իրաւաբանական ֆակուլտէտի մասերն են կազմում։ Որպէս զի ամեն բան կատարեալ լինի, վերջն էլ աւելցրել են մանկավարժութիւն, բայց դեռ անծանօթ լինելով այդ գիտութեան, առաջը բաց տեղ են թողել որոշումը գրելու։

Ոչինչ բացատրութիւն հարկաւոր չէ այս ծրագրին, ինքն ամենափառաւոր ապացոյց է Տաճկահայոց մէջ դպրոցական նպատակի բացակայութեան։ Այն միջոցները, որ ունին պոլսեցիք, բոլորովին ապարդիւն են անցնում. ապագայ սերունդը կը մեղադրէ նոցա իրանց իրաւունքներից չօգտուելու համար, բայց արդէն ուշ կը լինի. կան սխալներ, որ անհնարին է ուղղել։ Այդ սխալների վատ եւ կործանիչ հետեւանքները բազմաթիւ են, որ պիտի կրէ եւ կրում է իսկ նոր սերունդը։

Անորոշ, աննպատակ եւ կցկտուր կրթութեան հետքերն երեւում են վաղուց իսկ արեւմտեան գրականութեան, օրագրութեան եւ գործունէութեան բոլոր ճիւղերի մէջ։ Ամեն բանից քիչ, սխալ, կիսկատար տեղեկութիւն ունեցող մարդիկ հազարպատիկ վնասակար են, քան թէ բոլորովին ադէտները։

Ընթերցողը թող չը կարծէ, որ Լեւանտի միւս ափերում արեւմտեան Հայոց դպրոցները բարեկարգ են, դոցանից միայն Տրապիզոնի ուսումնարանը կարելի է յիշել, որ այժմ երկու տարի է արդէն 6 ամեայ ընթացքով եւ որոշ ծրագրով մի ժողովրդական դպրոց է։

Անշուշտ շատերին ծանօթ կը լինի, որ Սպարթալեան եղբարք ի՞նչ հոյակապ դպրոց են կանգնել Զմիւռնիայի մէջ, ականատեսի մէկն հաւատացնում է, որ Եւրոպա անգամ չէ տեսած այդպիսի չքեղ դպրոց. փառք եւ պատիւ Սպարթալեանց։ Բայց գիտէ՞ք արդեօք այդ ի՞նչ ուսումնարան էր ցարդ, նորա ղեկավարի անունը երաշխաւոր էր կարծես, թէ պէտք է քիչ շատ կանոնաւոր միջնակարգ վարժարան լինէր։ Մեր ստացած հաստատ տեղեկութիւններին նայելով, այդ դպրոցը կանոնաւոր եւ հաստատուն ծրագիր չէ ունեցել, դասարաններում իւրաքանչիւր տարի ինչ եւ ինչքան կամեցել են այնքան են սովորեցրել, ոչ մի առարկայ սովորողական չէ եղել, [illegible] հայերէն (.՞.)։ Այնքան մեծ է եղել այդ դպրոցում անկարգութիւնը, որ դպրոցում երբ յայտնի անյառաջադիմութիւն է երեւացել (որ միշտ պիտի երեւար), բաւականացել են դպրոցի պատին յայտարարութիւն կպցնելով, թէ «վարժապետներուն ծուլութիւնն եւ հիւանդութիւնն է պատճառ դպրոցիս յետադիմութեան»։ Ո՞վ կարող է հաւատալ արդեօք այսպիսի խորին ադիտութեան նոյն իսկ Եւրոպայի գրանը նստած գործիչներից։

Միւս անգամին կը շարունակենք ծանօթանալ Տաճկահայոց դպրոցների վարչութեան, կազմակերպութեան եւ մանկավարժական ուղղութեան հետ։

(Արձագանք) Ն. Բ.

(¹) ԾԱՆՕԹ. ԽՄԲ. Կեդր. Վարժարանի այժմեան ծրագիրը շատ տարբեր է այստեղ ներկայացածէն եւ յարգոյ յօդուածագիրը մի միայն ընթերցմամբ գաղափար կազմած ըլլալ կը թուի։

ԾԽԱԽՈՏԻ ՇԱՀԱԿՑԱԿԱՆ ՌԷԺԻ
ՕՍՄ. ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ

Օսմանեան Կայսրութեան Ծխախոտի Շահակցական Ռէժիին բաժնետէրք ի սովորական Ընդհանուր Ժողով հրաւիրեալ են 1890 յունվար 4/16 հինգշաբթի օր, միջօրէի ժամ մէկին, ի Կեդրոնատեղին Վարչութեան, Կ. Պոլիս, Թիճարէթ խան (Ղալաթիա), լսելու համար Վարչական Խորհրդոյ տեղեկագրին ընթերցումն, և,

1. Վաւերացնելու համար, եթէ հարկ կայ, 1888 մարտ 12ին (Հ. Տ. փետրուար 28) փակուած տարեշրջանին հաշուեկշիռն և հաշիւները.

2. Որոշելու համար այդ տարեշրջանին շահաբաժինը.

3. Ձեռնարկելու համար Վարչական Խորհրդոյ անդամոց ընտրութեան, որք լրացուցած են իրենց պաշտօնը։

Սովորական Ընդհանուր Ժողովին ներկայ գտնուելու իրաւունք ունին այն անձինք բաժնետէրք որք առ նուազն երեսուն բաժին ունին, և որք առ այս պարտին իրենց բաժինները յանձնել առ առաւելն մինչեւ 1889 դեկտեմբեր 23/4 յունվար 1890,

Ի Կ. Պոլիս, առ Կեդրոնատեղին.

Ի Պէրլին, առ Պ. Ս. Պլայխրէօտըր, սեղանաւոր (Պէհրէնշտրաս).

Ի Լոնտոն, առ Գործակալութիւնն Օսմ. Կայս. Պանքային, 26, Թրոկմորդըն.

Ի Բարիզ, առ Գործակալութիւնն Օսմ. Կայս. Պանքային, 7, Մէյէրպէր փողոց

Ի Վիէննա, առ Գրէտի Անշդալտ (Վաճառականութեան և ճարտարարուեստից համար վարկի աւստրիական առանձնաշնորհեալ կայսերական-արքայական Ընկերութիւն։)

Իւրաքանչիւր բաժնետիրոջ պիտի յանձնուի ստացագիր մը, որով պիտի կրնայ մտնել Ընդհանուր ժողովին մէջ։

Որոշմունք կը տրուին ներկայ անդամոց ձայներուն մեծամասնութեամբ։

Իւրաքանչիւրն այնչափ ձայն ունի որչափ անգամ երեսուն բաժին, առանց մէկը կարենալու 10 ձայնէն աւելի ունենալ յանուն իրեն, ոչ ալ քսանէ աւելի՝ թէ յանուն իրեն և թէ՛ իբր ներկայացուցիչ այլոց։ 3—3

ՄԱՄՈՒԼ խափանեալ զաւեշտաթերթի արտօնատէր Գէորգ Էֆէնտի Ալվազեան՝ Միթիլլենէն ընտիր ծիթաիւղ և օճառ, Թէնէտօսէն պատուական գինի և Իզմիրէն ընտիր օղի բերել տուած է, և աժան գնով կը վաճառէ Ղալաթիա Բէնշլընկիճ-Բազար 1 փոխ խան։ Այսօրէն զատ, յատկապէս բերել տուած է Կիպրոսի պատուական գումանտարիան, Եւրոպայէն փորձ Սալամի եղբարց ընտիր գոնեակները թէ՛ շիշերով և թէ՛ տակառով, և Սկիւտարի ընտիր «Չալըշ իզզալիքեն» ճերմակ գինի։ Նաեւ ամենաշնորհ ծիթապտուղ, լուբիա և շաքար։ Յաճախորդք մեծապէս գոհ կը լինին առնելու թէ՛ ընտրութեան և թէ՛ աժանութեան համար։ 918

ԱԶԴ
ՏՈՔԹ. ԳԱԲՐԻԷԼ ՀԷՔԻՄԵԱՆ

Որ Ամերիկայէն նոր վերադարձած է մայրաքաղաքս, չարաթը երեք անգամ, երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերը ժամ 6 էն 10 կը գտնուի Ալէքեան դեղարանն, ի Պոլիս մեծ մաքսի դէմ։ Տօքթորը կը խնամէ ամէն տեսակ հիւանդութիւններ և մասնաւորապէս ախրոտիդեան ախտերը։ Միւս օրերը կը գտնուի մի և նոյն ժամերուն իւր տունն ի Բերա Թէփէ-Պաշը թիւ 8։ 861 25—27

ՏՕՔԹ. Ա. ՔՕՍԱՆՍ ՏԸ ՐԱՅԹԷՐ

Բժիշկ, վիրաբոյժ և մանկաբարձ, վկայեալ Ամստերտամի համալսարանէն, հաստատուած է ի Բերա, Եէնի-Չարշի փողոց, թիւ 80։ Հիւանդները կ'ընդունի միջօրէի ժամ 1 էն 2, ըստ Եւրոպացւոց. երեքշաբթի և ուրբաթ օրերը ձրիաբար կը դարմանէ հիւանդները։ 905

ՏՐ. ՔՆՈՐՍԻ

Հակատենդային դեղ, շինուած ի ձեռն



Մայստըր Լուսիուս Պրունինկի, ի Հէօխըստ, Գերմանիա, որ միակ իրաւունք ունի սոյն դեղի պատրաստութեան, պաշտպանեալ արքայական արտօնագրով։

Տր. Քնորսի Անթիբէրինն, երիտասարդաց համար 1 էն 2 կրամ կ'առնուի՝ Ջրի կամ ուրիշ ո և է ըմպելիքի մէջ լուծուելով, և ամենէն ազդեցիկ ու ամենէն ծանօթ դեղն է գլխու ցաւի, անգարի, ջղային ցաւի, յօդացաւի, ժանտատենդի, և ուրիշ շատ հիւանդութեանց մէջ լաւագոյն հականեխիչ դեղն է։ Ջերմապէս կը յանձնարարուի Բժշկական համալսարանէն

Կը գտնուի ամէն ծանօթ դեղագործի և դեղավաճառի քով։

Տր. Քնորսի Անթիբէրինի վրայ փընտռել Առիւծի պատկերը։ Իւրաքանչիւր տուփ անպատճառ կը կրէ Տր. Քնորսի ստորագրութիւնը կարմիր տառերով։

Զգուշանալ կեղծերէն։ 515

ՏՈՔԹ. Ս. ԱՐԱՊԵԱՆ

Բարիզու բժշկական համալսարանէն վկայեալ Տօքթ. Ս. Արապեան իրեն մասնաւոր ճիւղ ընտրած է սրտի և կուրծքի հիւանդութիւնները։ Սոյն հիւանդութիւնները Բարիզ բրոֆէսէօր Բօթէնի մասնաբաժնին մէջ մասնաւոր խնամքով ուսումնասիրած է և 12 տարիներէ հետէ յարատեւ այդ հիւանդութեանց վրայ կ'աշխատի։

Այս հիւանդութեանց մասնաւոր ուսումը միւս հիւանդութեանց վրայ կատարեալ հմտութեան պէտք ունի և Տէարք բժիշկք գիտեն թէ երբեմն որչափ դժուար է անոնց սկզբնական պատճառները գտնել։

Ուստի կը յուսայ թէ դժուարակնճիռ պարագայից մէջ Տրք. բժիշկք իրեն խորհրդակցութեան ալ դիմել պիտի բարեհաճին։

Գիւղարնակ յաճախորդաց դիւրութեան համար երկուշաբթի և հինգշաբթի օրերը ժամը 8էն 10ը կամուրջի դիմաց Քիւչիւքեան դեղարանը պիտի գտնուի, Պոլսաբնակ յաճախորդաց համար Մուսալլա ճամատ յատուկ տուն վարձած է ուր ուրբաթ օրերը կէս օրէն վերջը հիւանդները ձրիաբար կ'ընդունի։ 919 6—16

ԻԼԱՆ

ՕՐՄԱՆ ՎԷՄԷԱՏԻՆ ԻՏԱՐԷԻ ՈՒՄՈՒՄԻԷՍԻ

Գուլփար տաղը մատէնինին 305 սէնէսի հասըլաթընտան օլարագ մէյտանա պուլունան պիր թագըմ 53709 տիրհէմ ճէտիտ 466 քիւսիւր սիմ խալիս իլէ 239 տիրհէմ ճէտիտ 774 քիւսիւր ալթունըն միւզայետէսի պիլ խըրա սէնէի հալիյէ չէհրի քեանունի էվվէլին 26ընճը սալը կիւնիւ սաաթ 9 1/2 րաատէլէրինտէ գարարտատէսի քէշիտէ օլունմագ վէ 24 սաաթ զարֆընտա 100տէ իւչ զամ գապուլ օլունուպ անտէն սօնրա զամմ գապուլ օլունմամագ, վէ թէգարրուր իտէճէք համանը հէման վէ նագտէն վէ տէֆաթէն վէ լիրայի օսմանի 100 ղուրուշ օլարագ Օրման վէ Մէատին խտարէի ումումիյէսի վէզնէսինէ թէսլիմ գըլընմագ իւզրէ մէզգիւր միւզայետէյէ տախիլ օլմագ իսթէյէնլէրին թէմինաթ աքչէլէրիյլէ բիրլիքտէ մագամը Նէզարէթի Մալիյէ տաիրէսինտէ Օրման վէ Մէատին իտարէի ումումիյէսինտէ միւզայետէ գօմիսիօնունա մուրաճաաթ էյլէմէլէրի իլան օլունուր։

20 քեանունի էվվէլ 305 740

Բէյան

Այտըն վիլայէթի տախիլինտէ Մէնթէշէ սանճաղընա թապի Միլասի գազասընտա Քէրմէ նահիյէսինտէ Ալաքիլիսէ գարեէսինտէ միւթէհարրի գաձիրէ խըրաճ օլունուպ խարիթասը միւճիպինճէ չիմալէն Կէօք Գարու Թէբէսինտէն պէտ իլէ Օլճագ չէշմէսինտէն պիլ միրուր Մէշէ գաեասը Թէբէսի պէյնինտէ վագը հաթթը միւնքէսիր վէ ղարպէն մէզքիւր Մէշէ գաեասը Թէբէսինտէն պէտ իլէ Էշէք եօլը Թէբէսի պէյնինտէ վագը հաթթը միւսթագիմ վէ ճէնուպէն մէզքիւր Էշէք եօլը Թէբէսինտէն պէտ իլէ Քէնտի Կէլէն Թէբէսի պէյնինտէ վագը հաթթը միւսթէգիմ վէ շարգէն մէզքիւր Քէնտի Կէլէն Թէբէսինտէն պէտ իլէ մէյտանի հաւուտ օլան Կէօք Գարու Նօգթասը պէյնինտէ վագը հաթթը միւսթէգիմ իլէ մահտուտ օլուպ 256 հէքթարէն իպարէթ արազի տէրունինտէ իմալ օլունաճագ օլան պիր գըթա քէօմիւր մատէնին 99 սէնէ միւտտէթլէ մատէնը մէզքիւրին միւթէհարրիսի Հիւսամէտտին վէ Մանօլաքի էֆէնտիլէր էօհտէսինէ իհալէսի մուգարրէր պուլունտէն մատէնը մէզքիւր հագգընտա պիր կէօնէ իթիրազը օլանլարըն Մէատին Նիզամնամէսինին 29 վէ 30 ընճը մատտէլէրի միւճիպինճէ Թարիխը իլանտէն իթիպարէն իքի մահ միւտտէթ զարֆընտա Տէրսաատէթտէ Մալիյէ խազինէի ճէլիլէսի տաիրէսինտէ Օրման վէ Մէատին իտարէի ումումիյէսինէ վէ մահալլինտէ մէրքէզը վիլայէթէ միւրաճաաթ էյլէմէլէրի իլան օլունուր։

21 քեանունի էվվէլ 305 981

ԻԼԱՆ

ՊԱՊԸ ՍԵՐԱՍՔԷՐԻ

Միւպայեա օլունաճագ օթուզ պէշ պին քիլօ ճէտիտ պուղտայըն իշպու քեանունի էվվէլին եիրմի իւչիւնճի կիւնի պիլ միւնագասա գարարը գաթիի վիրիլէճէկի վէ իրթէսի կիւնի թէքարրիւր իտէճէք ֆիյաթընտան եիւզտէ պէշ թէնզիլի գապուլ օլունաճաղը ճիհէթլէ իթասընա թալիպ օլանլարըն մագամը սէրասքէրի լէվազըմաթ տաիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր։

21 քեանունի էվվէլ 1889

Նօ. 29 1—3

---

50 ԱՌ ՀԱՐԻՒՐ ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆ

0 Գրուասան, 94, Եիւքսէք Գալտըրըմ, Վոյվոտայի դիմաց

Ձմրան համար արանց եւ տղայոց վերարկուներու և զգեստներու ահագին մթերք, 50 % տարբերութեամբ ուրիշ խանութներէն։

	Ղրշ.
Ձմրան գծաւոր բանդալոն, ընտիր ձեւ և կարուածք	45
Պատրաստ Ռոպ տը շանպըր, արտասովոր գին	90
Պաշտօնական զգեստ, ըռտէնկոտ, բանդալոն և ժիլէ՝ Սըտանի կերպասէ	220
Բուն Թիֆթիքէ բալտօ, ամբողջ բուրդ, մինչեւ հիմա չտեսնուած գին	210
Գաւղոր բալտօ մէջը սադէն կամ Ֆլանէլ, Սըտանի կերպաս, չլսուած գին	170
Ֆրիզէ բալտօ ամբողջ բուրդ, սքանչելի ձեւ	160
Բոլըրին բալտօ գեղեցիկ չըվիէդէ, ամբողջ բուրդ, ոչինչ գին	120
Ելպէօֆի կերպասէ բանդալօն ամբողջ բուրդ	60
Ռուպէի կերպասէ բանդալօն շատ վայելչաձեւ	70
Ձմրան բալտօ, մէջը Ֆլանէլ, ամբողջ բուրդ	115

Ահագին մթերք տիկնանց և օրիորդաց վերարկուներու և ժագէթներու։—0

Գրուասան վաճառատունը նոր միջոցներ ձեռք առած է, որով կարող է գաւառներն ալ ղրկել խնդրուած ապրանքները։ (24)

HAMBURG MUNICH UNITED
ՀԱՄՊՈՒՐԿ ԵՒ ՄԻՒՆԻԽ
ՄԻԱՑԵԱԼ
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

Դրամագլուխ	ֆռանք	8.000.000
Պահեստի դրամ ցվերջ յունիս 1888	»	4.817.262
Տարեկան հասոյթ » » »	»	10.069.700

Ընկերութիւնքս ՓՈԽԱԴԱՐՁ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ կ'ապահովագրեն մթերանոցներ և բնակութիւններ և սոցա մէջ գտնուած վաճառքներ և կարասիներ խիստ չափաւոր սակագնօք։

Լիազօր ներկայացուցիչ Կ. Պոլսոյ

ՑՈՒԱՆՔՖՕՐԹՈՒԱՋ
ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Դրամագլուխ ֆռանք 6.250.000 Պահեստի դրամ ֆռանք 1.270.300

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շոգենաւուց և առագաստանաւուց վրայ բեռցուած վաճառքներ, ինչպէս նաև թղթատարական և փոխադրական ընկերութեանց յանձնուած թանկագին նիւթեր և դրամ պարունակող ծրարներ խիստ նպաստաւոր պայմանօք և սակագնօք։ Այն նիւթերու վրայ մեծաքանակ գումարներ կարենալ ապահովագրելու համար Ընկերութիւնս միացած է եւրոպեան 13 լուրջ ապահովագրական հաստատութեանց հետ որոց դրամագլուխն ու պահեստի դրամն է Աւելի քան 100.000.000 ֆռանք

Լիազօր ներկայացուցիչ համայն Թուրքիոյ

ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ, Պոլիս, Պահչէ—Գաբու, Եօւկիատիս խան. 35

ԾԱՆՕԹ.—Տէարք Ներսէսեան Հայր և Որդի, Ընկերութեանցս Պոլսոյ դրամատեարք, լիակատար ՎԱՐԿ ու ՀՐԱՀԱՆԳ ընդունած են վճարելու անմիջապէս այն ամէն վնաս, որոյ հաշիւը հաստատուած է և վաւերացեալ Ընդհ. Գործակալութենէն.

ԻԼԱՆ
ՊԱԳԸ ՍԻՐԱՄՔԼԸՐԻ

Նիւրկէն ադաճընաան մամուլ մասուրա խիրմի պէշ պին ատէտ, պէհէրի խիրմի փարայա.

Դամիէշ խիւլասասը պին քիլօ, պէհէրի օն պիր ղուրուշա.

Թուլթգալ իքի պին քիլօ, պէհէրի ալթը ղուրուշ աօդուզ փարայա.

Եասը բավէչ թիմուրը քիլօ իքի պին սէքիզ եիւզ եէթմիշ պէշ, պէհէրի իքի ղուրուշ խիրմի պէշ փարայա.

Եավարլադ թէլ թէմէթ թիսուր տօդուզ պին սէքիզ եիւզ ալթմըշ պէշ քիլօ, պէհէրի իքի ղուրուշ օն պէշ փարայա.

Թիմուր սաճ եիւզ օթուզ տէմէթ պէհէր քիլօսը իքի ղուրուշ օն պէշ փարայա։

Շարտօն խիրմի պէշ պին ատէտ, պէհէրի ալթը փարայա.

Եիւն քիլիմ պէշ պին ատէտ, պէհէրի խիրմի իւչ ղուրուշա.

Թիմուր բէրչին չիվիսի եիւզ էլլի քիլօ, պէհէրի ալթը ղուրուշ օն պէշ փարայա.

Ֆապրիգայի հիւմայունլար իչէ էլպիսէ վէ սարրաճխանէ անպարընա միւպայեա օլունաճագ պալատէ մուբադդամ էշիա քեանունի էվվէլին խիրմի պէշինճի կիւնիւնէ դաատար միւնագասայէրի իճրա օլունարագ դալիպը դալիպլէրի վիրիլէճէկլինտէն իհթիյա թալիպ օլանլարըն մադամը Սէրասքէրի լէվազըմաթը տաիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր։

20 քեանունի էվվէլ 1889 933
Նօ. 27 2—3

ԻԼԱՆ
ՊԱԳԸ ՍԻՐԱՄՔԼԸՐԻ

Խարիճէտէ թէլիմ օլունմադ վէ ծէրլի իմալի վաքէթա վէ քէօսէլէտէն մամուլ օլմադ խուզրէ միւպայեա օլունաճագ տէօրթ պին չիֆթ սիւվարի վէ պէշ պին չիֆթ բիատէ ճիզմէլէրի իլէ պէշ պին տէօրթ եիւզ դըյէյի ալթիդ ծէրլի իմալի հաստէքեարի քէօսէլէ իլէ ծէտի պին իքի եիւզ դըյէյի ալթիդ ծէրլի իմալի վաքէթանըն քեանունի էվվէլին խիրմի իւչիւնճիւ կիւնի դարարը դալիպլէրի վիրիլէճէկլինտէն իհթիյա թալիպ օլանլարըն մադամը Սէրասքէրի լէվազըմաթը ումումիյէ տաիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր։

20 քեանունի էվվէլ 1889 934
Նօ. 28 2—3

ՄՈՍ
ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լիվըրբուլ և Միջերկրական ծովու բանող շոգենաւք

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Քանոբուս	4200	Սֆինքս	3000
Ֆէրօս	4000	Օսայրիս	3000
Օսմանլի	4000	Նեբթիս	3000
Սեսօստրիս	3250	Բէրսա	3000
Թիպա	3250	Լոգիոս	800
Մեմֆիս	3250	Օլիմպոս	800
Մարիօթիս	3250	Սեթիլ	700

Դիմել առ Ժ. Վ. ՎԻԹՕԼ և ԸՆԿ.
Ուիթօլ խան
ՃԷՅՄՍ ՄՈՍ և ԸՆԿ.
276 31, Ճէյմս Սդրիդ, Լիվըրբուլ

ՊԱԶԱՐ ԱԼԷՄԱՆ
ԿԱՂԱՆԴՊԷՔ

Տօնական օրերու առթիւ, ՊԱԶԱՐ ԱԼԷՄԱՆ իր բազմաթիւ յաճախորդներուն ուշադրութիւնը կը հրաւիրէ. Պազար Ալէմանի վաճառատանց մէջ ամէն տարուան նման կը գտնուին կաղանդչէքի համար հազար տեսակ առարկաներ բոլորովին աժան գնով, թէ՛ պերճանքի և թէ առօրեայ գործածութեան համար։

ՄԱՍՆԱՒՈՐԱՊԷՍ Տղայոց խաղալիկներ, ժամացոյցներ, Պղտիկ կարասիներ, Տղայոց համար կառքերու կարասիներ, Ծննդեան ծառի համար զարդեր, Հեծելանիւներ, լամբարներ, Տիկիններու և խաղալիկներու համար առարկաներ, Արդուզարդի և կարի պահարաններ, Գրասենեկի պիտոյք, կաղամարք, Պզքմիտօք, Շաքարեղէնք, ատամն բլաքէ և նիքէլէ սպասներ թէյի և խահուէի համար, Հոտաւէտ նիւթեր, փողպատներ, Անձրեւանոցներ, ձեռնոցներ, կօշիկներ, Պրասելէթներ, Ականջներ, Պավիոնայի գարուչար շիշէ և հազար ուրիշ տեսակ առարկաներ։

Ժամացոյցներուն գինը տարօրինակ կերպով աժան է։ 960 9—2

THÉ ECONOMIQUE
ΤΕΙΟΝ ΕΙΚΟΝΟΜΙΚΟΝ
ԹԷՅ ՏՆՏԵՍԱԿԱՆ
MARQUE DEPOSÉE

ՀԱՅ ԹԷՅԱՎԱՃԱՌ
Կ. ՍԱՎՐՈՒՍԵԱՆ և Ց. ԽԱՍԳՈՒԼԵԱՆ
10 Ճէլըլ-խանպէյ խան կը 10
ՉԻՆԱՍՏԱՆԻ, ՃԱՎԱՅԻ ԵՒ ՀՈԼԱՆՏԱՅԻ
ԸՆՏԻՐ ԵՒ ԱԽՈՐԺԱՀԱՄ ԹԷՅԵՐ

Վաճառատունս իւր հաստատութենէն ի վեր իւր ուղղութեամբ, պատուաւորութեամբ և անխարդախ գործառնութեամբ ստացած հռչակաւ, թէ գաւառներու մէջ և թէ յաստիս խիստ շատ յաճախորդներ գոհ ըրած է։

ՎԱՃԱՌՄՈՒՆՔ
ՄԵԾ ԵՒ ՓՈՔՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ
ԳԻՆԵՐԸ ՉԱՓԱՒՈՐ 949

ՔԻՒՆԱՐՏ (CUNARD)
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՇՈԳԵՆԱՒՈՒՑ

[illegible]

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Ումպրիա	7718	Գադալոնիա	4841
Էդրուրիա	7718	Պոթնիա	4535
Սերվիա	7391	Սամարիա	2574
Աւրանիա	7268	Մարաթոն	2403
Բավոնիա	5587	Ագլաա	2393
Ցեֆալոնիա	5517	Սարակոսա	2166
Կալլիա	4809	Թարիֆա	2246
Սիթիա	4557	Բալմիրա	2144
Ալճերիօ	2143	Թրինիտատ	1899
Քէտար	1876	Մորոգգօ	1855
Հէրպուրկ	1614		

Մերսէ շոգենաւը, նաւապետ Սթիֆէնս աստ հասաւ և ի մօտոյ պիտի մեկնի ի Լիվըրբուլ։

Թէրիֆֆա շոգենաւը, նաւապետ Բրինկ, Լիվըրբուլէն աստ կ'սպասուի յունվ. 10ին։

Դիմել առ ԹՈՄԱՍ Ջ. ՃՈԼԻ գործակատար
Thomas C. Joly
Թիւ 1, Բիւյիւք Հալիլ փաշա խան,
910 Ղալաթիա

Արտօնատէր Ս. ՏԱՄԱՏԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ



[illegible]
ԳԵՂԵՑԿԱՑՈՒՑԻՉ, ՄԱՐՄՆՈՅ ԳՈՅՆԻ, ՄԻՏՔ ՆՈՒԱԶԵՑՈՒՑԻՉ, ՄԻՏՔ ԹԱՐՄ։

Ընդամենն մը փորձը պիտի համոզէ ամէն Տիկին թէ որչափ գերազանց է այս ուրիշ ամէն հեղանիւթներէ և բազմաթիւ փոշիներէ։ Առաջին անգամ գործածելովն ալ, որ քանի մը վայրկեանի գործ է, պիտի տեսնուի խոյոն որ երեսը, վիզը, թեւերը և ձեռուըները պիտի առնուն անոյշ փափկութիւն մը և մարմարինի փայլ, հանդերձ շուշանի և վարդի գունով և բուրմամբ։ Այսպիսի գրգիչ յատկութիւնները կը հանդարտեցունէ։ Ընհետ կ'ընէ մորթի սեւուքը, երեսի և ձեռքի ցաները, արեւայրուքը, և ուրիշ ամէն բռնութիւն և բծաւորութիւն։ Եւ այս ամէն բանով՝ անկարելի կ'ընէ մատնուիլ թէ արհեստով գեղեցկացուած է։

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Soutnampton Row). Նիւ-Եորք Բարիզ ու Նիւ Եորք։ Ըլլալ վաճառուի սափրիչներու, անոյշ իւղագործներու և անգղիացի դեղագործներու քով։

Կը վաճառուի Ժ. և Ն. Քանչիւր եղբարց Բրիտանական դեղարանը. 433 Մեծ փողոց Բերա, Եուսուֆ Քարուէնա, Ղալաթիա, Եիւքսէք Գալտըրըմ 95 և 97. Բիւյիւքեան եղբարց քով 77 էյիւպ էօնիւ,— 31 Եէնի ճամի և 168 Մեծ փողոց Բերայի, և Իզմիտօնի քով Բերա Մեծ փողոց Թիւ 428։ 61

ԺՕՐԺ ԷՖԹԻՄԻԱՏԻՍ
Պոլիս Աչըը Էֆէնտի խանի ներքեւ Թիւ 17
ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՀՈՎԱՆՈՑՆԵՐՈՒ

Հովանոցներու յատուկ Օ ՌՈԲԻՆՍՈՆ մթերանոցի հիմնադիրը, Պ. Ժօրժ Էֆթիմիատիս, կը ծանուցանէ իւր բազմաթիւ յաճախորդաց և պատուարժան հասարակութեան թէ Աչըը Էֆէնտի խանին ներքեւ գտնուած իւր Թիւ 15 մթերանոցն, ամբողջ ապրանքներով ուրիշ փոխանցած և նոյն խանի ներքև Թիւ 17 վաճառատունը բացած է. Այս նոր վաճառատան մէջ կը գտնուին թէ՛ արանց և թէ կանանց համար ամէն տեսակ մետաքսեղէն ու բրդեղէն հովանոցներ, բրդեայ գուլպաներ, ֆանելաներ, Թրիգօ տաբատներ, ձեռաց սրբիչներ, անձեռոցներ, Թաշկինակներ և այլ այդ կարգի ապրանքներ, բոլորն ալ խիստ դիւրամատչելի գներով։ 971

L'AVENIR DES FAMILLES
Լ'ԱՎԸՆԻՐ ՏԷ ՖԱՄԻՅԼ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓՈԽԱԴԱՐՁ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՎԱՍՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵԱՆ ԴՐԱՄԱԳԼԽՈՑ
ԿԸ ԳՈՐԾԷ
ԸՆԴ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՄԲ ԳԱՂԻՈՅ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ
ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
61, ՌԷՊԻՒՊԼԻՔ ՓՈՂՈՑ, ԼԻՈՆ 61 (ՖՐԱՆՍԱ)

ԱՊԱՀՈՎԱԳՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՔ	ՄԻՆՉԵՒ ՑԱՅՍՕՐ ԵՂԱԾ ՎՃԱՐՄՈՒՆՔ
80.000.000 Ֆրանք	1.500.000 Ֆրանք

Լ'ԱՎԸՆԻՐ ՏԷ ՖԱՄԻՅԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆ, որ հաստատուած է նպաստելու համար փոքր խնայողութեանց, արագ ղարգացումն մ'ունեցած է։ Իւր նպատակն է որոշեալ պայմանաժամի մէջ վերակազմել դրամագլուխ։

Ընկերութեան գործառնութիւնք բազմադիմի են, ինչպէս շարժական արժէից և փոխ տրուած դրամագլխոց ապահովագրութիւն, կորուսեալ դրամագլխոց մը վերակազմութիւն, Երաշխաւորութիւնք և Գլխագնաց փոխառութեանց և Ճարտարարուեստից և վաճառականութեան մէջ գործածուած դրամագլխոց, մանկանց համար օժիտք, հանգստեան անտուկ ծերութեան համար, ցկեանս եկամուտներու կազմութիւն, ի մի բան այն ամէն գործառնութիւնք որոց նպատակն է խնայողութիւն։ Ընկերութեան Պոլսոյ գործակալութիւնն սկսած է 1884 Յունուար 1 էն։

Տեղեկութեանց և բաժանորդագրութեան համար դիմել առ Պետրոս Էֆէնտի Անպարճեան, գործակալ Ընկերութեան ի Կ. Պոլիս, Թաշ խան, Թիւ 40. Պահչէ Գաբու, Պոլիս։ 903

NUBIAN BLACKING
Produces a POLISH without Brushing
Equal to PATENT LEATHER
On BOOTS, SHOES And LEATHER GOODS
NUBIAN IS WATERPROOF.

ՆՈՒԲԻԱԿԱՆ ՆԵՐԿ

Խիստ յարմար է ներկելու համար կօշիկներն որք առաջին անգամէն կը փայլին, առանց խոզանակելու պէտք ունենալու։ Այս փայլը, որ նշանաւոր պայծառութիւն մ'ունի, ամբողջ շաբաթ մը կը տեւէ։ Կօշիկներն անթափանցելի կ'ընէ ջուրի և խոնաւութեան։ Տիղմը կամ ուրիշ աղտեղութիւնները դիւրաւ կը վերցուին թրջած լաթով մը, առանց փոխելու ներկին փայլը կամ գոյնը։

Այս ներկը կը յարմարի արանց և կանանց ամէն տեսակ կօշիկներու։ Կարելի է գործածել զայն՝ ներկելու համար ճամբորդութեան կաշեպայուսակները։

Գործածման եղանակ. Ներկելի տարրկայն խնամով սրբել, այնպէս որ հին ներկէն հետք չմնայ։ Ապա փայլուն հեղուկէն քսել, կա՛մ սպունգի կտորով մը կա՛մ վրձինով։ Թրջուած մասերն ոյթն ինքնին կը չորնայ։

Զգուշանալ կեղծերէն.

Ընդհանուր կեդրոնատեղին է ԷՏՄՈՆՏ ԳԱՐՈՒԱՆԱ, Անգլիական Ընդհանուր մթերանոց, Վոյվոտա, Պահականոցին քով, կայարան Ղալաթիա-Շիշլիի Թրամուէյից, Թիւ 95 և 97, Ղալաթիա։ 78

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
ԳԱՒԼԸՄԱՆ ԵՒ ՊԼՈՒՄՊԼԸՐԿԻ

Ղալաթիա Պէօյիւք Միլլէթ խան, միջազգային թղթատարատան վրայի յարկը

Սոյն վաճառատան մէջ խիստ աժան գներով կը վաճառուին ամէն տեսակ ճերմակեղէնք, կանանց համար կրկնոցներ, տղայոց համար հագուստներ, կէս շրջազգեստներ, քօղէներ, օծոտի համար ճերմակեղէնք, բանուածքներ, բազմատեսակ գուլպաներ, Թաշկինակներ և այլ այս տեսակ ապրանքներ։

Այս ապրանքներ, որոց ամենքն ալ լաւ տեսակէ են, կը վաճառուին թէ՛ փոքր և թէ մեծ քանակութեամբ։

Այս ապրանքներ կը պատրաստուին Վիէննայի և Պէրլինի յատուկ գործարանաց մէջ։ Նոյնպէս Անգլիաէն, Իտալիաէն և եւրոպական ուրիշ երկիրներէ եւս ապրանքներ կը բերուին։

Գաւառներէ եղած յանձնարարութիւնք կը կատարուին եթէ փոխարէնը փոխանակագրով և կամ թղթատարական դրոշմով ղրկուի։

Զը հաւնուած ապրանքները ետ կ'առնուին և ստակը ետ կը տրուի զեղչելով փոխադրութեան ծախքը։ 88

THE CROWN PERFUMERY COMPANY
ՀՈՏԱՒԷՏ ՆԻՒԹԵՐՈՑ ԳՈՐԾԱՐԱՆՔ ԼՈՆՏՈՆԻ «ԹԱԳ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Այս գոյացութիւնները շատ խիտ են, և անբաղդատելի իր բուրման սաստութիւն և տեւականութիւն։ Աւասիկ անոնց մէկ քանիին անունները.

ԹԷՆԿԼ ՎՈՒՏ (Թէնկլի փայտ)
ՎՈՒՏ ՎԻՈԼԷԹ (Մանիշակ անտառաց)
ԼԻԼԻ ՕՎ ՏԷԻ ՎԱԼԷՅ (Շուշան հովտաց)
ՀՈՒԱՅԹ ՐՈԶ (Ճերմակ վարդ)
ԳՐԷՊ ԷՅՓԼ ՊԼՈՍՍԸՄ
ՀՈՒԱՅԹ ՀԷԼԻՈԹՐՈՓ
ՍԹՈՒԷՖԱՆՈԹԻՍ
ՄԱԹԻՈԼԻԱ
ՃՕՔԻ ԳԼԸՊ
ԷՍ. ԲՈՒՔԷ
ՄԱՐԿԱՐԻԹԱ
ԻԼԱՆ ԻԼԱՆ
ՕՐՈՐՈՆԱՔՍ

Այս և այսպէս ուրիշ հոտաւէտ նիւթեր մեծ հռչակ հանած են Եւրոպայի արքունեաց, ազնուականութեան և բարձր դասուն մէջ, իրենց հոտին փափկութեան և տեւականութեան համար։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԼԵՅՏԵՐԱԿԱՆ ԳՈԼՈՆՅԱՅԻ ՋՈՒՐ։ Ուրիշ ո և է գործարաններէ ելածէն գերազանց։ Մէկ փորձ միայն կը բաւէ։

ՕՐԱԼԻՆ ՓՈՇԻ ԴԷՄՔԻ ՀԱՄԱՐ։ Այս փոշին յաջորդած է մինչեւ հիմա բոլոր գործածուածներուն անոր և ընդունուած է ազնուականութենէն և բարձր դասէն։ Դիմաց գոյնին փափկութիւն կուտայ, առանց հետք թողլու, մորթը կը պահպանէ արեւէն, հովէն, և փշտիկները կ'արգիլէ։

Կեղծերէն զգուշանալու համար, պէտք է դիմել միայն Կ. Պոլսոյ միակ գործակալին ԷՏՄՈՆՏ ԳԱՐՈՒԱՆԱ
231 Անգլիական Ընդհանուր Մթերանոց
Թիւ 95 և 97, Եիւքսէք Գալտըրըմ, Թրամուէյից կայարանին մօտ, Վոյվոտայի պահականոցին կից։

ТОВАРИЩ. РОСС. АМЕРИКАНСК. РЕЗИН. МАНУФАКТ.
1860 Т.Р.А.Р.М. С.ПЕТЕРБУРГ.
RUSSIAN-AMERICAN INDIA RUBBER C°

Ըստ որում մայրաքաղաքիս վաճառականներէն ոմանք, տեսնելով այն յաջողութիւնը զոր Ռուսական քաուչուէ մուճակները (լաստիք) կը վայելեն վերջին երկու տարիներս՝ իրենց վայելչութեամբ և հաստատութեամբ, այս տարի բերել տուած են ուրիշ երկիրներէ մուճակներ, որք կը կեղծեն ոչ միայն ներքանին վրայ գրուած կնիքներուն ձեւերն և գոյներն, հապա նաեւ կարմիր եռանկիւնը, պարտ անձին կը համարիմ հասարակութեան ուշադրութիւնն հրաւիրել այս կեղծերուն վրայ, ի վերեւ ներկայացնելով ռուսական մուճակներուն ճշմարիտ նշաններուն օրինակներն, որպէս զի Ռուս և Ամերիկեան ընկերութեան արտադրութիւնք, որոց միակ ներկայացուցիչն եմ յՕրիենթ, չ'շփոթուին յիշեալ կեղծերուն հետ։

Կարելի է Ռուսական ՃՇՄԱՐԻՏ ՄՈՒՃԱԿՆԵՐԸ գնել իմ վաճառատունէս, Մէյտանճըք փողոց, Թիւ 54 և 56 (Պոլիս) և հետեւեալ վաճառատուններէն։

Կ. Պոլիս, 8 Նոյեմբեր 1889 ԷՄ. ՄԷՐՃԱՆՈՖ

1. Միւ է Էօն Սրդիէլ, Պահչէ Գաբու, Թիւ 21
2. Իզլոոր, Մեծ փողոց Բերայի, Թիւ 433
3. Վէնդուրա եղբարք, Եիւքսէք Գալտըրըմ, 633.

Ծան. Գնուած ատեն ուշադրութիւն ընել թէ յիշեալ նշանները կան մուճակներուն վրայ։ 907

ՄՈԳԱԿԱՆ ՆԵՐԿ



Նոր գիւտ մ'է այս մազերուն գոյնը փոխելու համար մէկ երկու անգամէն, առանց ուրիշ ո և է նիւթի գործածութեան կամ լուացքի,

ՇԱԳԱՆԱԿԱՆԱԳՈՅՆԻ ԿԱՄ ԲՆԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԱԼ ՍԵՒԻ

Այս նոր ներկը բաղկացեալ է միայն արմատներու և խոտերու նիւթէ։ Սպիտակ կամ կարմիր մազերն անմիջապէս կը փոխուին պայծառ շագանակագոյնի կամ թանձր սեւի։

Փորձը ցոյց տուած է թէ այս ներկն որչափ գերազանց է նմանօրինակ ուրիշ պատրաստութիւններէ։ Իւր առաւելութիւնն է մազերուն ամենէն բնական երևոյթը տալ և ամենէն ուշադիր դիտողն ի զերև հանել։ Կը կասեցնէ հերաց անկումը, գլուխը կը մաքրէ, թեփը կ'անհետացնէ և նոր ոյժ կուտայ մազային մորթին։ Ուշադրութեամբ կարդալ

ԳՈՐԾԱԾՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Սրուակը երերցնել գործածելէ առաջ և փոքր քանակութեամբ հեղուկէն դնել սկաւառակի մը մէջ, յետոյ բարակ պզտիկ սանտրով մը կամ այդ հեղուկին մէջ թրջած ըստունգով մը լաւ և կերպով մազերուն վրայ անցունել զայն, այնպէս որ ամբողջ մազերը մէյ թրջին։ Ապա գլուխը բաց պահել մինչեւ որ հեղուկը չորնայ։ Բոլոր մազերը մէկ հեղլով, ոմանք մէկ երկու գործածութեան պէտք ունին, այլոց համար մէկ անգամը բաւ է։ Այն մէկ երկու անգամէն աւելի գործածուի, գոյնն աւելի թուխ կ'ըլլայ։ Անգամ մը որ ուզուած գոյնը ձեռք բերուած է, գոյն տարիներով պահելու համար կը բաւէ երեք չորս շաբաթը անգամ մը հեղուկէն գործածել։ Նոյն եղանակը գործածելու է մօրուքին և պեխերուն համար։ Պէտք չկայ գլուխը լուալ գործողութենէն առաջ կամ ետքը։ Բնականաբար վերջէն դէմքն և ձեռները լուալու է առ ի զգուշութիւն։

ԾԱՆ. Եթէ ուզուած գոյնը ձեռք չբերուի մէկ երկու գործողութենէ ետք, գլուխը լուալու է ջիւ մը ապօրով, ապա գլխուն քսելու է այդ ներկին մէջ թեթեւապէս թըրջած սպունգ մը, և ուզուած ազդեցութիւնն յառաջ կուգայ անմիջապէս։

ԿԵՂԾԵՐԷՆ ԶԳՈՒՇԱՆԱԼ

Միակ կեդրոնատեղի ԷՏՄՈՆՏ ԳԱՐՈՒԱՆԱ, ԱՆԳԼԻԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԹԵՐԱՆՈՑ, Վոյվոտա, Պահականոցին քով, կայարան Ղալաթիա-Շիշլիի Թրամուէյից, Թիւ 95 և 97, Ղալաթիա։ 77